



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Պատերազմն Եւ Տարի Մը Ետք

Տարի մը առաջ՝ այս օրերուն աշխարհասփիւռ Հայութիւնը անձկութեամբ եւ խոր մտահոգութեամբ կը հետեւէր Սեպտեմբեր 27-ի առաւօտեան Ատրպէյճանական բանակի շրթայագերծած լայնածաւալ յարձակումին՝ ուղղուած Արցախի խաղաղ բնակչութեան ու բնակավայրերուն դէմ:

Պատերազմի առաջին օրերուն Հայկական զօրքերը կը յաջողէին կասեցնել թշնամիի յառաջխաղացքը ու ետ մղել զանոնք: Կակնկալուէր որ մեծ պետութիւններու միջամտութեան եւ ճնշումներուն շնորհիւ կարելի պիտի ըլլար հաստատել զինադադար ու խուսափիլ մարդակային մեծ կորուստներէ: Սակայն, շատ չանցած ի յայտ եկաւ որ, Հայկական զինուած ուժերը ոչ միայն կը կռուէին Ազերի բանակին, այլ եւ Թուրքիոյ դէմ, որ անմիջականօրէն կը վարէր ռազմական գործողութիւնները՝ պատերազմի ու խաղաղութեան որոշումները վերապահելով իրեն: Աւելին, դարձեալ թրքական հովանաւորութեամբ դէպի պատերազմի ճակատ կը փոխադրուէին տարբեր երկիրներէն հաւաքուած հազարաւոր վարձկան զինուորներ, որոնք որպէս մարդկային վահան կ'օգտագործուէին Ազերի զօրքերուն կողմէ:

Մարտական գործողութիւններու երկարածումով սկսան կամայականօրէն կուտակուիլ Հայկական կողմի մարդկային ու տարածքային կորուստները: Թշնամին օգտագործելով իսրայէլեան եւ թրքական անօդային թռչող հարիւրաւոր Սարքեր կը կարողանար տիրապետել երկինքին, ու պատերազմի ընթացքը փոխելու Հայկական կողմի բոլոր ջանքերը կը մատնուէին ծախսողութեան: 44 օր դիմադրելէ ետք, Նոյեմբեր 9-ին, երբ արդէն գրաւուած էր Շուշին ու վտանգուած մայրաքաղաք Ստեփանակերտը, Ռուսաստանի միջնորդութեամբ ստորագրուեցաւ մարտական գործողութիւնները դադարեցնելու շուրջ եռակողմ համաձայնութիւն՝ Հայաստանի համար խիստ ծանր պայմաններով, որոնց արդիւնքով թշնամիի վերահսկողութեան տակ անցան Արցախի ու անոր շուրջ տարածքներու մեծ մասը:

Հակառակ այս ծանր պարտութեան Արցախահայութիւնը կը շարունակէ ապրիլ ու գոյատեւել իր հողին վրայ՝ վերաշինելով իր քանդուած բնակարանները, գիւղերն ու քաղաքները:

Ծանր էին մեր մարդկային կորուստները. Աւելի քան 3700 զոհ, հազարաւոր վիրաւորներ ու

Հայաստանի Եւ Արցախի Մէջ Նշուեցաւ 44-օրեայ Պատերազմի Մեկնարկի Տարեկիցը

Սեպտեմբեր 27-ին՝ 44-օրեայ պատերազմի մեկնարկի տարեկիցը Լեռնային Ղարաբաղի մէջ նշեցին յիշատակի միջոցառումներով: Արցախի բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան կարգ մատուցուեցաւ, Մայր տաճար ներկայ էր նաեւ Ղարաբաղի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանը:

Ժամը 11-ին, ինչպէս Հայաստան, Լեռնային Ղարաբաղ եւս մէկ ըրոպէ լուծիւն չաչտարարուեցաւ, ապա Արցախի նախագահի առաջնորդութեամբ երթ կատարուեցաւ Ստեփանակերտի յուշահամալիր՝ Եղբայրական գերեզմանատուն, ուր ամփոփուած են Արցախեան պատերազմներու զոհերու աճիւնները:

Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ Պատուոյ պահակախումբի կողմէ պահպանուող ծառերուն մօտ վարչապետ Նիկոլ Փաշինեանին ներկայացուեցաւ Երեւանի բուսաբանական այգիին մէջ հիմնուելիք Կեանքի պուրակի նախագիծն ու առաջիկային նախատեսուող աշխատանքները:

Պուրակին մէջ, որ պիտի ունենայ 25-30 հեքտար տարածք, պիտի տնկուին Արցախեան պատերազմներու բոլոր զոհերու կենդանութիւնն ու ներկայութիւնը խորհրդանշող ծառեր, իսկ կենաց-ծառը կը խորհրդանշէ բոլոր նահատակները եւ հայրենիքին տուած անոնց կեանքը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան վարչապետի աշխատակազմի ղեկավար՝ Արայիկ Յարութիւնեանի, Առողջապահութեան նախարար՝ Անահիտ Աւանեսեանի եւ Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարար՝ Նարեկ Մկրտչեանի հետ այցելեց Ջինուորի տուն՝ Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կեդրոն:

Կառավարութեան ղեկավարը ԵՊԲՀ ղեկավար՝ Արմէն Մուրատեանի ուղեկցութեամբ նախ շրջայց-



Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան Եղբայրական գերեզմանատան մէջ ծաղիկներ կը գետնդէ գոհուածներու շիրիմներուն

կատարեց վերականգնողական կեդրոնի մէջ, ծանօթացած յատուկ զինուոր հաշմանդամներու համար ստեղծուած վերականգնողական-մասնագիտական կեդրոնի ընթացիկ գործունէութեան, զարգացման հետագայ ծրագիրներուն, ինչպէս նաեւ կեդրոնին մէջ բացուած «Գեղեցկութիւն» զինուորներին խորագրով ցուցահանդէս-վաճառքին ներկայացուած աշխատանքներուն: Վերջիններէն գոյացած ողջ հասոյթը տղաները պիտի նուիրաբերեն Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կեդրոնին: Հայ:

Այնուհետեւ վարչապետ Փաշինեան հանդիպած է Ջինուորի տան մէջ բուժում ստացող Հայրենիքի պաշտպաններուն հետ եւ ծանօթացած անոնց վերականգնման ընթացքին, պատասխանած զանոնք յուզող շարք մը հարցերու: Հանդիպման ընթացքին՝ ժամը 11:00-ին, վարչապետը տղաներուն հետ մէկ ըրոպէ լուծեամբ յարգանքի տուրք մատուցած է 44-

օրեայ պատերազմի զոհուած հերոսաշորդներու յիշատակին: Սեպտեմբեր 27-ին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Մայրապոլսի Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Գայանէ վանքը կատարուեցաւ հոգեհանգստեան արարողութիւն արցախեան 44-օրեայ պատե-

Արհ. Տ. Ռաֆայէլ Արքեպ. Մինասեան Ընտրուեցաւ Կաթողիկէ Հայոց 21-րդ Կաթողիկոս



Նորընտիր Կաթողիկոս-Պատրիարք Ամենապատիւ Տ. Ռաֆայէլ Պետրոս 21-րդ Մինասեան

Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց Մինոտիը Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց 21-րդ Կաթողիկոս Պատրիարք ընտրեց Արհ. Տ. Ռաֆայէլ Արքեպ. Մինասեան:

Գոյժ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ մահը Ընկեր ՄԱՆՈՒԷԼ ԱԴԱՍԵԱՆԻ, որ պատահեցաւ Երկուշաբթի, Սեպտեմբեր 27-ին, Լոնտոնի մէջ:

Ընկ. Ադամեան եղած է ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան երկարամեայ անդամ՝ ծաւալելով կուսակցական, ազգային, հասարակական, կրթական եւ գրական բեղուն գործունէութիւն՝ Լիբանանի եւ Լոնտոնի մէջ:

Որպէս գրող ու բանաստեղծ անհեղինակն է բազմաթիւ Հատորներու: Եղած է Խմբագիրը Լոնտոնի մէջ հրատարակուած «Նոր Սերունդ» պարբերականին:

Ընկ. Ադամեան եղած է Հայաստանի Գրողներու Միութեան անդամ ու արժանացած բազմաթիւ շքանշաններու եւ պարգևներու: ՍԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՍԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայաստանը Կարող է Լուրջ Դերակատար Լինել

ԱՐՄԵՆՈՒԳԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Միշտ եւ յատկապէս պատե-
րագմից յետոյ «ՀՀ»-ն գրում է, թէ
ինչ պէտք է անել տնտեսութիւնը
ուսուցիչ հանելու համար, թէ ինչ
քայլեր են պէտք տնտեսութեան
այս կամ այն ճիւղը զարգացնելու
եւ շղթայական արդիւնք ապահո-
վելու համար, թէ որտեղից պէտք է
սկսել, ինչպէս շարունակել եւ այլն:
Պէտք է, անհրաժեշտ է, հարկ է:
Այլ կերպ՝ առաջարկներն ու յու-
շումները՝ մեզինքն ու մասնագէտնե-
րից, գործը՝ պետութիւնից, որ պար-
տաւոր է անել պետութիւն-մասնա-
ւոր գործակցութեամբ կամ այլ
ձեւաչափերով ու ցանկացած գնով:

Այստեղ, սակայն, կարեւորա-
գոյն մի նախաքայլ կայ, առանց
որի սովորական պայմաններում
գործող ամենաարդիւնաւէտ մի-
ջոցն անգամ այս օրերին ոչ մի
օգուտ չի բերի: Խօսքը անվտան-
գութեան մասով գործողութիւն-
ների մասին է: Այո, արդի աշխար-
հում տնտեսութիւնն ու քաղաքա-
կանութիւնը յաճախ այնքան սեր-
տաճած են, որ երբեմն նոյնիսկ
անհնար է գտնել բաժանարար
գիծը: Կամ՝ այդ գիծը, որպէս
այդպիսին, չկայ էլ: Բայց մեր
պարագայում հիմա տնտեսութիւնը
չի կարող քաղաքականութիւն թե-
լադրել, քանի դեռ հզօր չէ: Իսկ
հզօրանալու համար պէտք է նախ
հենց մեր անվտանգային խնդիրնե-
րը լուծենք: Միայն այդ դէպքում
կը կարողանանք եւ՝ ներդրումներ
ապահովել, եւ՝ տնտեսութեան յստակ
ճիւղերում ֆինանսական ներար-
կումներ անել: Որովհետեւ ոչ մի

գործարար անապահով երկրում
իր գումարները չի ներդնի: Եւ
այստեղ չի կարող օգնել նաեւ
սփիւռքը: Կեանքը ցոյց է տուել, որ
նոյնիսկ մեր՝ գործարար հայրե-
նակիցների շրջանում խենթեր ու
հայրենապաշտներ չունենք:

Այո, հայրենասիրութիւնից
եղնելով փոքր ու միջին ձեռներե-
ցութեան ոլորտում որոշակի ներդ-
րումներ հնարաւոր են: Բայց մեզ
մեծածաւալ ներդրումներ ու խո-
շորածաւալ գործեր են պէտք տնտե-
սութեան էական շարժի համար:

Մենք այսօր փաստացի աշ-
խարհաքաղաքական այնպիսի բարդ
իրավիճակում ենք, որ եթէ մեր
երկրի համար անհրաժեշտ նուա-
զագոյն անվտանգութեան պայման-
ներ չապահովենք, ապա մեր փո-
խարէն դա որեւէ մէկ այլ երկիր չի
անելու:

Այն, ինչ այսօր կատարուում է
մեր երկրի սահմաններին կամ, որ
աւելի ստույգ՝ սահմաններից ներս,
կամ Գորիս-Կապան միջպետական
ճանապարհին, տառացիօրէն կաթ-
ուածահար է անում մեր երկիրը:
Ընդ որում, խօսքը միայն տնտեսու-
թեան մասին չէ, այլեւ՝ մարդկանց
բնականոն կեանքի խաթարման, բա-
րոյահոգեբանական մթնոլորտի անկ-
ման, սեփական ուժերին չհաւատա-
լու մասին է: Չաշխատեց տնտեսու-
թիւնը, կը տապալուեն պետութեան
բոլոր ոլորտները: Եւ թշնամին սա
շատ լաւ է գիտակցում:

Աւելի լայն կոնտեքստով՝ խօսքը
իրանի հետ միջպետական ճանա-
պարհի անգործունակ դառնալու

Շար.ը էջ 7

Հայ-Թուրքական Յարաբերութեան ԱՄՆ Ելակետն Ու Ռուս-Թուրքական Հաշտութեան Հանգուցային Կետը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Հանրային հեռուստաընկերու-
թեանը Հայաստանում ԱՄՆ դես-
պան Լին Թրեյսիի հարցազրույցը
չօշափելի ուշադրութեան արժա-
նացաւ առաւելապէս արցախեան,
հայ-ատրպէյճանական հակամար-
տութեան վերաբերեալ ասուած
յայտարարութիւնների առումով:
Մինչդեռ, պակաս հետաքրքիր չէր
նաեւ դեսպանի արտայայտու-
թիւնը հայ-թուրքական յարաբե-
րութեան թեմայով, ընդ որում
ինչպէս բովանդակային, այդպէս
էլ թերեւս երանգային առումով:
Նախ, նկատելի էր, որ հայ-թուր-
քական յարաբերութեան թեմային
դեսպանի անդրադարձում չէր
նկատուում դրա վերաբերեալ մեծ
հետաքրքրութիւն, ի տարբերու-
թիւն օրինակ արցախեան, հայ-
ատրպէյճանական թեմատիկայի
վերաբերեալ պատասխանների:

Միաժամանակ, այդ հանգա-
մանքով հանդերձ, ուշադրութեան
է արժանի նաեւ այն, որ դեսպանն
այդուհանդերձ բաւականին հա-
մառօտ, սակայն յստակ արձանագ-
րեց Նահանգների համար կարեւոր
եղակետը՝ հայ-թուրքական արձա-
նագրութիւններ, որոնք նախաս-
տորագրուեցին կամ ստորագրուե-
ցին 2009 թուականին Յիւրիխում,
այդպէս էլ սակայն մնացին չվաւե-
րացուած: Աւելին, Սերժ Սարգս-
եանն իր նախագահութեան աւար-
տին՝ 2018 թուականի Մարտի 1-ին
յայտարարեց այդ արձանագրու-

թիւնները չեղարկելու մասին: Սերժ
Սարգսեանը յայտարարեց, թէ նոր
իրավիճակում պէտք է բանակցուի
նոր փաստաթուղթ: Ըստ այդմ,
երբ ԱՄՆ դեսպանը նշում է, որ
կարելի է հետ գնալ եւ վերսկսել
այդ արձանագրութիւններից, առա-
ջանում է հարց՝ իսկ դա հնարաւո՞ր
է, եթէ Սերժ Սարգսեանի հրամա-
նագրով դրանք չեղարկուել են:

Միւս կողմից սակայն, այստեղ
թերեւս պէտք է նկատի առնել ոչ
թէ բուն արձանագրութիւնները,
այլ դրանց բովանդակութեանը
վերադարձը: Փաստացի, այդ ար-
ձանագրութիւնների բովանդակու-
թիւնը Ուաշինկթոնին բաւարա-
րում է, կամ առնուազն շահեկան է
թուում հայ-թուրքական երկխօսու-
թեան գործընթաց մեկնարկելու
տեսանկիւնից, դրա հեռանկարայ-
նութիւն պատկերացնելու տեսան-
կիւնից: Մի բան, ինչը թերեւս
այնքան էլ ընդունելի չէ Մոսկ-
ուայի համար: Յամենայնդէպս,
կարծես թէ հենց դրա վկայութիւն
էր ՌԴ արտգործնախարար Լաւրո-
վի օրերս հայ-թուրքական թեմայի
անդրադարձի շրջանակում ցիւ-
րիխեան արարողութիւնից արուած
չիշատակումը: Լաւրովը նկատեց,
որ հայկական կողմը չէր ուզում
ստորագրել, որովհետեւ համաձայն
չէր Արցախի վերաբերեալ թուր-
քերի պայմանին, միաժամանակ իր
հերթին դնում էր արցախեան թե-

Շար.ը էջ 7

Խաղաղութեան Մասին Խօսելը Գուցէ Միջազգային Հանրութեան Ականջների Համար Հաճոյ է, Բայց Մեր Իրականութեան Ընկալումներին Չի Համապատասխանում

Քաղաքագետները հակասական
են որակում ՄԱԿ-ի Գլխաւոր
ասամբլեայի 76-րդ նստաշրջա-
նում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշին-
եանի ելոյթը:

«Մի կողմից Նիկոլ Փաշին-
եանը Ատպէյճանի գործողութուն-
ները որակում է որպէս ազրեսիա
լեռնային Ղարաբաղի դէմ, բայց
միւս կողմից առաջ է քաշում
խաղաղութեան օրակարգը, ասում
է, որ Հայաստանը պատրաստ է գնալ
խաղաղութեան ճանապարհով», - մեզ
հետ զրոյցում ասաց քաղաքագէտ
Անդրէաս Ղուկասեանը:

Յիշեցնենք, որ վարչապետ Նի-
կոլ Փաշինեանը ելոյթ ունեցաւ
Միաւորուած Ազգերի Կազմակեր-
պութեան Գլխաւոր ասամբլեայի
76-րդ նստաշրջանի ընդհանուր
քննարկումներին:

Իր ելոյթում վարչապետը կեղ-
րոնացաւ Հարաւային Կովկասի տա-
րածաշրջանում տիրող իրավիճա-
կի վրայ ներկայացրեց գոյութիւն
ունեցող խնդիրների լուծման վե-
րաբերեալ Հայաստանի տեսակէտ-
ներն ու առաջարկութիւնները:
Վարչապետը կրկին խօսել է խաղա-
ղութեան օրակարգի մասին. «Խա-
ղաղութեան օրակարգի դէմ ուղղ-
ուած գործելակերպ է այն, որ ի
հեճուկս Նոյեմբերի 9-ի յայտարա-
րութեան 8-րդ կէտի՝ Ատրպէյճանը
ոչ միայն մինչեւ օրս գերութեան
մէջ է պահում Հայաստանի Հանրա-
պետութեան մի քանի տասնեակ

քաղաքացիների, այլեւ նրանցից
շատերին շինծու մեղադրանքնե-
րով դատապարտել է 6-ից մինչեւ
20 տարի ազատազրկման:

Բացի սա՝ կան քաղաքացի-
ներ, որոնց գերեզմարուած լինելու
փաստը Ատրպէյճանը մինչեւ օրս
չի հաստատում, չնայած՝ նրանց
գերութեան մէջ լինելու մասին
կան յստակ ապացոյցներ: Սա
առաւել անընդունելի է դառնում
այն ֆոնին, որ 2020 թուականի
աշնանը ատրպէյճանցի օգտատէրե-
րը հրապարակել են կոնկրետ հայ
զինուորների գերեզմարուելու տե-
սանիւթեր, իսկ աւելի ուշ՝ յայտ-
նաբերուել են այդ զինուորների
գլխատուած կամ գնդակահարուած
մարմինները: Մեր գերիների խոշ-
տանգումների ենթարկելու մասին
անհերքելի ապացոյցներ ունենք:

Թշնամութեան մթնոլորտի
խորացման աղաղակող օրինակ է
Պաքուում բացուած՝ այսպէս կոչ-
ուած աւարների պուրակը, որտեղ
ատրպէյճանցի դպրոցականներին
էքսկուրսիաների են տանում դի-
տելու գերեզմարուած, սպանուած
կամ արնաքամ լինող հայ զինուոր-
ների մանեկները: Այս եւ միւս
քայլերն արւում են ի ցոյց դնելու
խաղաղութեան անհնարինութիւնը
մեր տարածաշրջանում, բայց մենք
հետեւողականօրէն առաջ ենք տա-
նելու այդ օրակարգը՝ մեր տարա-
ծաշրջանի համար խաղաղութեան
դարաշրջան բացելու բոլոր հնա-

րաւորութիւնները օգտագործելով
եւ նոր հնարաւորութիւններ ստեղ-
ծելով», - ընդգծել է ՀՀ վարչապե-
տը:

Ղուկասեանի խօսքով վարչա-
պետի ելոյթից նաեւ տպաւորու-
թիւն էր ստեղծուում, որ միջազգա-
յին հանրութիւնը չի նկատել, կամ
անտարբեր է մնացել Ատրպէյճանի
ազրեսիայի նկատմամբ եւ միայն
Ռուսաստանի Դաշնութիւնն է, որ
միջամտել է եւ դադարեցրել պա-
տերազմը: «Բայց դա հակասում է
այն իրողութեանը, որ հիմա կայ:
Կոնգրեսի ընդունած բանաձեւը,
այլ միջազգային կառույցներ դա-
տապարտում են Ատրպէյճանի ազ-
րեսիան եւ գործադիր իշխանու-
թիւններին մի շարք գործողու-
թիւնների են կոչ անում», - ասաց
Ղուկասեանը:

Միեւնոյն ժամանակ, քաղա-
քագէտի խօսքով, տեղին էր գերի-
ների հետ կապուած հարցի շեշ-
տադրումը, որը եւակողմ համա-
ձայնութեան շրջանակում ոչ մի
կերպ չի լուծուում:

Քաղաքագէտ Ռոբերտ Ղեւոնդ-
եանի խօսքով էլ վարչապետի ելոյ-
թը միանշանակ չէ: Ճիշտ կը լինէր
այդ ելոյթում ՀՀ վարչապետը
պատասխաններ նախորդ օրը Ալիե-
ւի՝ նոյն ամպիրոնից հնչեցրած յայ-
տարարութիւններին: Բայց հաշուի
առնելով այն փաստը, որ ելոյթը

Շար.ը էջ 6



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

«Հիւսիս-Հարաւի» ճանապարհի Հարցով 7 Անձի Վերաբերեալ Գործը Ուղարկուած Է Դատարան

ՀՀ գլխաւոր դատախազութեան դատաւարական ղեկավարման ներքոյ, ՀՀ Քննչական կոմիտէի ՀԿԳ քննութեան գլխաւոր վարչութեան, ՀՀ ԱԱԾ (Ազգային Անվտանգութեան Ծառայութիւն) քննչական բաժանմունքի, ՀՀ ոստիկանութեան, ՀՀ ՊԵԿ աշխատակիցներու կողմէ համատեղ կատարուող բազմաձառ վարչական գործունէութեան ընթացքին ձեռք բերուած ապացոյցներու բաւարար համակցութեամբ պարզուած եւ հիմնաւորուած է «Հիւսիս-Հարաւ ճանապարհային միջանցք» ծրագրի «Թալինից Գիւմրի ճանապարհի վերակառուցում եւ բարելաւում» ենթածրագրի ծիրէն ներս, Թալին-Լանջիկ եւ Լանջիկ-Գիւմրի հատուածներու շինարարական աշխատանքներու որպէս յանձնառու, կամ խորհրդատուական ծառայութիւն կատարող անձիք կատարած եպն շարաշահումներ, որոնց պատճառով ընդհանուր վնասը՝ ներառեալ նաեւ հաշուարկուած տուժ-տուգանքները, կը կազմէ աւելի քան 2.7 միլիարդ ՀՀ դրամ:



Գագիկ Ծառուկեանին պատկանող «Մուլթի Կրուփ» ընկերութեան տնօրէն Սեդրակ Առուստամեան

տպագրութեամբ զբաղող Ա/Ձ աշխատակցութիւն:

Նախաքննութեան ընթացքին, որպէս «Սթոնս» ՍՊ ընկերութեան՝ վերոնշեալ ղեկավարներու եւ աշխատակիցներու կողմէ կատարուած յանցաւոր գործողութիւններէն առաջացած վնասի հատուցման երաշխիք՝ ՀՀ ՔԿ-ի հաշուին փոխանցուած է 1 միլիարդ դրամ:

Վերոնշեալ դրուագով ՀՀ ՊԵԿ տեսուչներու մասով նախաքննութիւնը աւարտած էր աւելի վաղ, անոնց եւ եւս մէկ անձի վերաբերեալ գործը մեղադրական եզրակացութեամբ դատարան ուղարկուած էր աւելի վաղ:

«Հիւսիս-Հարաւ ճանապարհային միջանցք» ծրագրին առնչուող քրէական գործով բազմաթիւ այլ դրուագներով լրիւ, առարկայական եւ բազմակողմանի քննութիւնը, հետեւողական դատախազական հսկողութեան եւ ղեկավարման ներքոյ, կը շարունակուի:

Հայաստանի Տնտեսութեան Մէջ Արձանագրուած Են Դրական Ցուցանիշեր

Հայաստանի տնտեսական շարժունութեան ցուցանիշը 2021-ի Յունուար-Օգոստոսին 2020-ի նոյն ժամանակամիջոցի համեմատ աճած է 4.9 տոկոսով: «Արմէնփրէսի» հաղորդմամբ՝ այս մասին փաստած են ՀՀ վիճակագրական կոմիտէի հրատարակած տուեալները:

Արդիւնաբերական արտադրանքի ծաւալը Յունուար-Օգոստոսին՝ 2020-ի նոյն ժամանակամիջոցի համեմատ աճած է 1 տոկոսով, եւ շինարարութեան ծաւալը՝ 7.3 տոկոսով:

Առեւտուրի շրջանառութեան մէջ Յունուար-Օգոստոսին աճը կազմած է 7.1 տոկոս, իսկ մատուցուած ծառայութիւններու ծաւալը (առանց առեւտուրի) աճած է 5.3 տոկոսով:

Ընդդիմադիր խմբակցութիւնները Դիմած Են Նախագահ՝ Արմէն Սարգսեանին

2021-ի Սեպտեմբեր 24-ի Ազգային ժողովի արտահերթ նիստին, առանց որեւէ այլ կողմի, անոնց կարգին Ազգային ժողովէն ներս ներկայացուած ընդդիմութեան կարծիքը լսելու, քննարկելու եւ հաշուի առնելու, հապճեպ եւ ակնյայտ շտապողականութեամբ ընդունուած է «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրէնքին մէջ փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ կից

ներկայացուած օրէնքներու նախագիծերու փաթեթը: Այս մասին յայտարարութիւն տարածած է «Հայաստան» խմբակցութիւնը:

«Համայնքների խոշորացման այս վիճակագրաց գործընթացի հետ կապուած» «Հայաստան» եւ «Պատիւ ունեմ» խմբակցութիւնները դիմել են նախագահ Արմէն Սարգսեանին՝ առաջարկելով օգտուել Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան յօդուած 129-ի 1-

Շուշիի Վերաբերեալ Քրէական Գործերով Շուրջ 150 Անձ Հարցաքննուած Է

2020-ի պատերազմական գործողութիւններու ընթացքին Հայաստանի եւ Արցախի պաշտպանութեան, զինուորական ծառայութեան դէմ ուղղուած առերեւոյթ յանցագործութիւններու փաստերու առթիւ յարուցուած է եւ կը քննուի աւելի քան 2 հազար քրէական գործ, յայտնած է Հայաստանի գլխաւոր դատախազութիւնը:

Ըստ հաղորդագրութեան՝ կը քննուին օրինակ՝ գորահաւաքային գորակոչի, գորահամալրման գործընթացներուն թոյլ տրուած հնարաւոր խախտումները, պատերազմի ընթացքին զինուորական ծառայութեան կարգի դէմ ուղղուած յանցագործութիւնները, Արցախի հարաւային՝ Մեխակավանի, Հորադիզի, Հադրութի ուղղութիւններով գործերու եւ ստորաբաժանումներու գործողութիւններու ղեկավարման, հակառակորդի կողմէ հարաւային ուղղութեամբ դէպի Հայաստանի սահմաններ եւ դէպի Արցախի կեդրոն՝ Շուշի քաղաք առաջխաղացման ու բնակավայրերու գրաւման հանգամանքները:

Գլխաւոր դատախազութիւնը նաեւ տեղեկացուցած է, որ քննութեան առարկայ են «Նժդէ» կոչուող բարձունքի («Լեւի-Թեփէ») Մեխակավանի, Հադրութի, Մեծ Թաղերի, Թաղավարդի, Սղնախի, Քարին Տակի եւ Շուշիի ուղղութիւններով կատարուած ռազմական գործողութիւններուն առնչուող՝ հրապարակայնօրէն տարբեր հարթակներով ներկայացուած եւ

իրաւապահ մարմիններու տեսադաշտը յայտնուած, ինչպէս նաեւ գոհուած, անհետ կորած զինծառայողներու ծնողներէն, հարազատներէն ստացուած՝ յանցագործութեան յատկանիշներու առկայութեան մասին վկայող բոլոր տուեալները՝ պաշտօնատար անձանց կողմէ պաշտօնական դիրքի չարաշահման, պաշտօնական անփութութեան եւ հրաման չկատարելու հանգամանքները պարզելու նպատակով:

Ինչպէս նշուած է հաղորդագրութեամբ, միայն Հայաստանի Ազգային անվտանգութեան ծառայութեան ներս Արցախի հարաւային ուղղութեամբ եւ դէպի Շուշի, Շուշին մէջ տեղի ունեցած իրադարձութիւններու ու գործողութիւններու վերաբերեալ քննուող քրէական գործով հարցաքննուած է շուրջ 150 անձ, անոնց կարգին՝ Արցախի նախագահ, Պաշտպանութեան բանակի հրամանատարներ, Արցախի նախագահի խորհրդական, ՊԲ հրամանատարի տեղակալ, Արցախի անվտանգութեան խորհուրդի նախկին քարտուղար եւ այլոք:

Դեռ Մայիսի սկիզբը, Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանը տեղեկացուցած էր, որ հարցաքննուած է պատերազմին վերաբերող քրէական գործի ծիրէն ներս:

Գլխաւոր դատախազութիւնը յայտնած է, որ քննուող քրէական գործերով աւելի քան 800 անձի մեղադրանք առաջադրուած է, անոնց կարգին նաեւ՝ Հայաստանի Զինուած ուժերու բաժրաստիճան սպաներու:

«Ազատութեան Տունը» Ստահոգութիւն 3այտնած Է Փաշինեանը Վիրաւորելու Համար Դիմատետրի Օգտատիրոջ Դէմ Քրէական Գործի Առնչութեամբ

«Ազատութեան Տուն» (Freedom House) միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը մտահոգութիւն յայտնած է Հայաստանի վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանը մեկնաբանութիւնով վիրաւորած դիմատետրեան (Facebook) օգտատիրոջ դէմ վերջերս յարուցուած քրէական գործի առնչութեամբ:

Կազմակերպութիւնը իր հաղորդագրութեամբ նշած է, որ այդ տեղի ունեցած է կառավարական պաշտօնեաններուն «ծանր վիրաւորանք» հասցնելը քրէականացնող օրէնսդրական փոփոխութիւններու՝ խորհրդարանի կողմէ ընդունուելէն երկու ամիս ետք, եւ «կը նշանակուի Հայաստանի մէջ ժողովրդավարական նորմերու՝ արտայայտուելու ազատութեան յստակ նահանջ»:

Հեղինակաւոր իրաւապաշտպան կազմակերպութիւնը Հայաստանի իշխանութիւններուն կոչ

կ'ընէ «անմիջապէս դադարեցնելու վիրաւորանքը քրէականացնող այս հակասահմանադրական օրէնսդրութեան կիրառումը»:

Սօտ մէկ շաբաթ առաջ հաղորդուեցաւ, որ Հայաստանի իրաւապահ մարմինները քրէական գործ յարուցած են Դիմատետրով վարչապետի լուսանկարին տակ վիրաւորական մեկնաբանութիւն գրելու համար եւ իրաւապահ մարմինները միջոցներ ձեռնարկած են մեկնաբանութեան հեղինակի ինքնութիւնը պարզելու ուղղութեամբ:

Նախորդ Ազգային ժողովը իր աշխատանքի վերջին օրերուն օրէնք ընդունելէ, որ կը քրէականացնէ անպարկէշտ խօսքեր եւ հայհոյանք: Քրէական օրէնագրքին մէջ աւելցուեցաւ նոր՝ 137.1 յօդուածը, որ վերնագրուած է «Ծանր վիրաւորանք» եւ կը նախատեսէ պատիժ՝ մինչեւ 3 միլիոն դրամ տուգանք կամ ազատազրկում՝ մինչեւ երեք ամիս ժամկէտով:

ին մասով սահմանուած իրաւունքից ու հնարաւորութիւնից եւ դիմել Սահմանադրական դատարան՝ յիշեալ օրէնքների Սահմանադրութեան հետ համապատասխանութիւնը որոշելու հարցով: Շուրջ 8 էջով շարադրուած հիմնաւորումներում նշուած են այն գործօններն ու փաստարկները, որոնք կարող են հիմք հանդիսանալ նախագահի կողմից՝ ՍԴ դիմելու համար: Նշենք, որ ի տարբերութիւն Սահմանադրական դատարանի

մէջ իրաւասութիւն ունեցող միւս ենթակայների՝ ՀՀ նախագահը լիազօրուած է նախնական սահմանադրական վերահսկողութեամբ՝ այն է՝ մինչեւ ԱԺ կողմից ընդունուած օրէնքի ստորագրումը այն ՍԴ-ում վիճարկել, որը թոյլ է տալիս կանխել առերեւոյթ հակասահմանադրական օրէնքի ներմուծումը ՀՀ իրաւական համակարգ՝ դրանից բխող բազմաթիւ բացասական դրսեւորումներով», - նշուած է յայտարարութեան մէջ:

ԼՈՒՐԵՐ

Ղարաբաղի Հակամարտութիւնը Կը Սպասէ Իր Արդարացի Կարգաւորման. Ըսաւ Նիկոլ Փաշինեան ՄԱԿ-ի Նստաշրջանին Առջեւ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ ՄԱԿ-ի Նստաշրջանին առջեւ

ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովին առջեւ իր ունեցած հեռակայ ելոյթի ընթացքին Վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց որ, Հայաստան պատրաստ է կառուցողական երկխօսութեան, որ պէտք է հանգեցնէ տարածաշրջանին ներս կայուն եւ յարատեւ խաղաղութեան հաստատման: Այս առումով ՀՀ-ն կ'առաջարկէ իրականացնել ռազմագերիներու, պատանդներու եւ այլ պահուող բոլոր անձանց վերադարձը, ինչպէս նաեւ վերսկսել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման խաղաղ գործընթացը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահութեան հովանիին տակ:

«Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը չի կարող կասեցուել ուժի կիրառման միջոցով, եւ հակամարտութիւնը չի կարող լուծուած համարուել ուժի կիրառման արդիւնքում: Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը սպասում է իր արդարացի կարգաւորմանը», - յայտարարեց Փաշինեան՝ աւելցնելով, որ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու միջնորդութեամբ իրականացուող շփումները կողմերուն հարաւորութիւն կու տան գտնելու ընդհանուր եզրեր եւ ասպարէզ բանալու շատ հարցերու պատասխանները գտնելու համար:

Ըստ Փաշինեանի՝ խաղաղութեան օրակարգին դէմ լողողած գործընթացը պէտք է այն, որ Ատրպէյջանն չի կատարեր Նոյեմբեր 9-ի

յայտարարութեան 8-րդ կէտը, մինչեւ օրս գերութեան մէջ պահուելով ՀՀ մի քանի տասնեակ քաղաքացիներ, անոնցմէ շատերին ալ շինծու մեղադրանքներով դատապարտելով ազատագրկման: Ան նաեւ ընդգծեց, որ կան քաղաքացիներ, որոնց գերեզմանները ըլլալու փաստը Ատրպէյջանի մինչեւ օրս չի հաստատուել, հակառակորդ անոնց գերութեան մէջ գտնուելու մասին կանխատակ ապացոյցներ:

Փաշինեան անդրադարձաւ նաեւ տարածաշրջանային ճանապարհներու բացման, ինչոր եւս եռակողմ յայտարարութեան կէտերէն է: Ըստ Փաշինեանի՝ այս խնդրի լուծումը հնարաւորութիւն կը ստեղծէ տնտեսական կապերու ձեւաւորման համար, ինչպէս որ, խաղաղ զարգացման կարեւոր նախապայմաններէն է:

«Տարբերակներ կան, որոնք տարածաշրջանային մեկուսացման եւ թշնամութեան միջոցով արձանագրման նպատակ ունեն, բայց կան նաեւ այնպիսի տարբերակներ, որոնք ընդգծում են տարածաշրջանային փոխկապակցուածութիւնը եւ թշնամութեան միջոցով քայլ առ քայլ յաղթահարման միջոց կարող են դառնալ: Մենք հենց այս վերջին տարբերակի կողմնակից ենք:

«Եթէ բացուի նաեւ Թուրքիան Հայաստանին կապող երկաթուղին, տարածաշրջանային կո-մունիկացիաների բացման թեման շատ աւելի մեծ մասշտաբներ կ'ունենայ», - յայտարարեց Նիկոլ Փաշինեան:

Գոնկրէտը Պահանջած Է Ձեկոյց՝ Ատրպէյճանի Ռազմական Յանցագործութիւններուն Մասին

Միացեալ Նահանգներու Գոնկրէտի Ներկայացուցիչներու Տունը օրինագիծ ընդունած է, որ կը պահանջէ Ատրպէյճանէն անյապաղ ազատ արձակել հայ ռազմագերիները:

Օրինագիծը, որ ներկայացուած է Ներկայացուցիչներու պալատի 16 անդամներու կողմէ, կը պահանջէ նաեւ գեկոյց Ատրպէյճանի ռազմական յանցագործութիւններու վերաբերեալ՝ ներառեալ ապօրինի զինամթերքի եւ սպիտակֆոսֆորի օգտագործումը հայ խաղաղ բնակիչներուն դէմ:

Բացի այդ, պահանջուած է հետաքննել՝ այն անօդաչու թռչող սարքերուն մէջ ամերիկեան արհեստագիտութեան օգտագործումը, որոնք օգտագործուած են հայ խաղաղ բնակիչներու թիրախաւորման համար 2020 թուականի արցախեան պատերազմի ժամանակ:

Նախագիծը ներկայացուցած էին Ատամ Շիֆը, Թոնի Քարդէնասը եւ Պրատ Շերմանը, անոնց աջակցած են շարք մը այլ Գոնկրէտականներ:

Հայաստանի Եւ Արցախի Մէջ Նշուեցաւ

Շարունակուած էջ 1-էն

րազմին զոհուած հայրենեաց պաշտպաններու հոգիներու խաղաղութեան համար:

Արարողութեան մասնակցած

էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ եւ աշխատակիցներ, բարերարներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, «խօսնակեան» հանրակրթական դպրոցի մանկավարժներ եւ սաներ:

Նիու Եորքի Մէջ Կայացած Է Հայաստանի Եւ Ատրպէյճանի ԱԳ Նախարարներու Հանդիպումը



Հայաստանի Եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներ Արարատ Միրզոյեանի Եւ Ճեյհուն Պայրամով

ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու մասնակցութեամբ՝ Նիու Եորքի մէջ, ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 76-րդ նստաշրջանի ծիրէն ներս, կայացած է Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներ Արարատ Միրզոյեանի եւ Ճեյհուն Պայրամովի հանդիպումը: Համանախագահները Միրզոյեանի եւ Պայրամովի հետ ունեցած են նաեւ առանձին հանդիպումներ:

Հանդիպումներուն մասնակցած է նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ՝ Անճէյ Քասիչիկը:

Համանախագահներն ու արտաքին գործոց նախարարները, ըստ յայտարարութեան, քննարկած են «Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ չլուծուած հարցերու լայն շրջանակ»: Միջնորդները առաջարկած են իրավիճակի ապամազլցումին ուղղուած յատուկ միջոցառումներ եւ հնարաւոր հետագայ քայլեր:

Միջնորդները ողջունած են արտաքին գործոց նախարարներու

առաջին հանդիպումը 2020-ի Նոյեմբերէն ի վեր՝ զայն գնահատելով որպէս «տարածաշրջանի անվտանգութեան, կայունութեան եւ բարգաւաճման նպաստելու նպատակով ուղիղ երկխօսութեան միջոցով խաղաղ գործընթացին մէջ վերստին ներգրաւուելու՝ երկու երկիրներու վճռակալութեան նշան»:

Հայկական կողմի հաղորդմամբ՝ հնգակողմ հանդիպման ընթացքին Հայաստանի ԱԳ նախարարը արտայայտած է հայկական կողմի պատրաստակամութիւնը՝ վերսկսելու խաղաղ կարգաւորման գործընթացը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահութեան ձեւաչափով:

«Արարատ Միրզոյեանը վերահաստատել է համանախագահների հետ հանդիպմանը յայտնած դիրքորոշումը ապամազլցումի եւ մարդասիրական խնդիրների կարգաւորման անհրաժեշտութեան վերաբերեալ», - նշուած է Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան տարածած հաղորդագրութեամբ:

Լաւրով. «Նիւ Եորքի Մէջ Համաձայնուած Է Մինսքի Խումբի Համանախագահներուն Տարածաշրջան Այցերու Վերսկսման Հարցը»

Ռուսաստանի Արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրովի խօսքով՝ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի դիւանագիտական գերատեսչութիւններու ղեկավարներու հետ օրերս Նիու Եորքի մէջ կայացած բանակցութիւններու ընթացքին յստակ արդիւնքներ ձեռք բերուած են:

«Որքան ես հասկցայ, համանախագահները համաձայնեցուցած են՝ [Լեռնային Ղարաբաղ] այցելութիւններու նպատակով տարածաշրջանային շրջագայութիւններու վերսկսման, տեղույն Հայաստանի եւ Ատրպէյճանի ներկայացուցիչներու հետ հանդիպման հարցերը», - TACC -ի հաղորդմամբ՝ նշած է Լաւրով՝ աւելցնելով, - «հանդիպումներ նախատեսուած են նաեւ Ստեփանակերտի մէջ»:

Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարը նաեւ նշած է, որ 2020 թուականի Նոյեմբերին ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու գլխաւոր արդիւնքը տարածաշրջանի կայունութեան հաստատումն է:


«2020 թուականի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան հրապարակումէն անցած զրեթէ մէկ տարուայ գլխաւոր առանձնա-



Ռուսաստանի Արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրով

յատկութիւնը այն է, որ կայունութիւն հաստատուած է, անիկա կը պահպանուի: Ռուսաստանեան խաղաղապահ զօրախումբը կը նպաստէ, որ այժմ մենք որեւէ լուրջ բռնարարքներ չենք տեսներ: Փոքր միջադէպերը, որ սկզբնական շրջանին կ'արձանագրուէին, արագօրէն կը մարուին: Անգամ մը եւս ընդգծեմ, որ այժմ այնտեղ իրադրութիւնը կայուն է, չնայած խնդիրներու պակաս չկայ», - յայտարարած է Սերկէյ Լաւրովը:

Վան Նայսի Սուրբ Պետրոս Եկեղեցին Վանդալութեան Ենթարկուած է



Վան Նայսի Սուրբ Պետրոս հայկական եկեղեցին անցեալ հինգշաբթի օրը վանդալութեան ենթարկուած է: Կոտորուած է եկեղեցւոյ ճշտ հագուադէպ գունաւոր դժագրուած ապակիները (վիթրաժ):

Սուրբ Պետրոս եկեղեցւոյ քահանայ Տէր Շնորհք Տեմիրճեանը զանգուածային լրատուական Միջոցներուն յայտնած է, որ տեսախցիկներու ձայնագրութիւնները ցոյց տուած են, որ առաւօտեան ժամը 1:30-ին յարձակողը սեւ հագուստով եւ գլխարկով եղած է

եւ պայուսակ ունեցած է: Ան այդ ժամանակ պեյսպոլի մահակով սկսած է ջարդել Շըրմըն Ուէյլ վրայ գտնուող վիթրաժային պատուհանները:

Եկեղեցական խորհուրդը վանդալիզմի մասին իմացած է վաղ առաւօտեան, եւ անմիջապէս տեղեկացուցած է Լոս Անճելըսի ոստիկանութեան, որ յայտարարած է, որ աշխուժօրէն կը հետաքննէ միջադէպը: Ոստիկանութիւնը միջադէպը որակած է որպէս «վանդալութիւն»:

Յակոբ Քէօշկերեան Նշանակուեցաւ Հայկական Խորհուրդի Երեւանի Գրասենեակի Հաղորդակցութեան Պատասխանատու

ՄԴՀԿ Հայկական Խորհուրդը (Armenian Council) յայտարարեց թէ, Յակոբ Քէօշկերեան նշանակուած է Հայկական Խորհուրդի Երեւանի Գրասենեակի Հաղորդակցութեան բաժնի պատասխանատու:

«Ինծի համար ուրախալի եւ պատիւ է մաս կազմել Հայաստանի Հայկական Խորհուրդի աշխատակազմին, առիթը ունենալով նաեւ զարգացնելու Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ կապերը, յատկապէս այն հանգրուանին ուր Խորհուրդը կը շարունակէ նոր ծրագրեր մշակել եւ գործադրել Հայաստանի եւ Արցախի մէջ», - նշած է Քէօշկերեան:



Հայկական Խորհուրդի Երեւանի Գրասենեակի Հաղորդակցութեան բաժնի պատասխանատու՝ Յակոբ Քէօշկերեան

հուրդի Երեւանի Տնօրէնուհի Քրիսթին Շահինեան: «Մենք ուրախ ենք, որ ունինք նման տաղանդաւոր երիտասարդ մը որ մաս պիտի կազմէ Հայկական Խորհուրդի աշխատակազմին եւ վստահ ենք, որ ան կարենոր դեր պիտի ունենայ Խորհուրդի ծրագրերու հաստատման մէջ», - աւելցուց Շահինեան:

Արհ. Տ. Ռաֆայէլ Արքեպս. Մինասեան

Նորընտիր Կաթողիկոս-Պատրիարքը ստացաւ Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տ. Ռաֆայէլ Պետրոս 21-րդ Մինասեան անունը, ինչպէս կը տեղեկացնէ Սուրբ Աթոռը:

Արհ. Տ. Ռաֆայէլ Արքեպս Մինասեան 2011-էն մինչեւ օրս Առաջնորդն է Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուքրաինայի

եւ Արեւելեան Եւրոպայի Կաթողիկէ Հայոց, կը հանդիսանայ «Հայկական Քարիտաս» բարեօրհան եւ հասարակական կազմակերպութեան նախագահ:

Տ. Ռաֆայէլ Արքեպս. Մինասեան երկար տարիներ ծառայած է Լոս Անճելըսի մէջ, ուր իր օրով կառուցուեցաւ Կլէնտէլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կաթողիկէ եկեղեցին:

Գերշ. Տ. Խաժակ Ս. Արք. Պարսամեան Մասնակցեցաւ Կաթողիկէ Հայոց Նորընտիր Պատրիարքի Մատուցած Անդրանիկ Ս. Պատարագին



Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ եւ Վատիկանի Ս. Աթոռի մօտ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մշտական ներկայացուցիչ Գերշ. Տ. Խաժակ Ս. Արք. Պարսամեան երէկ Հռոմի մէջ մասնակցեցաւ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ նորընտիր կաթողիկոս-պատրիարք Ռաֆայէլ Պետրոս ԻԱ.-ի անդրանիկ Ս. Պատարագին: Լեւոնեան քահանայապետական հայկական վարժարանի համալիրի մատրան երգիքին տակ տեղի ունեցաւ արարողութիւնը, որուն ներկայ գտնուեցան նաեւ Ս. Աթոռի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Կարէն Նազարեան, Անարատ Յղութեան հայ քոյրերու միաբանութեան մեծաւոր մայր Արուսեակ Սաճոյեան, Հայ Կաթողիկէ նուիրապետութեան բարձրաստիճան ներկայացուցիչներ եւ հաւատացեալներ: Նորընտիր կաթողիկոս-պատրիարքի մատուցած գոհաբանական Ս. Պատարագը, միեւնոյն ժամանակ, նուիրուած էր Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 30-ամեակին:

Լեւոնեան վարժարանի սեղանատան մէջ սիրոյ սեղան մըն ալ սարքուեցաւ՝ հոգեւորականաց դասու եւ Կարէն-Նանա Նազարեան ամուլի մասնակցութեամբ: Գերշ. Տ. Խաժակ Ս. Արք. Պարսամեան ճաշի ընթացքին ունեցաւ հակիրճ ելոյթ մը, որու ընթացքին ուրախութիւն յայտնեց Ս. Պատարագի ընթացքին աղօթակիր ըլլալու բերումով: Նորին սրբազնութիւնը մաղթեց, որ Բարձրեալ Տէրը առաւել զօրացնէ նորընտիր Ռաֆայէլ-Պետրոս ԻԱ. Պատրիարքը նոր կոչման մէջ եւ յաջողութեամբ պսակէ իր բոլոր բարի նպատակները: Եւ ինչպէս հայ ժողովուրդին եւ Քրիստոսի եկեղեցւոյ:

Դեսպան Կարէն Նազարեանն ալ հանդէս եկաւ շնորհաւորութեան խօսքով մը, որմէ վերջ ամենապատիւ եւ զերերջանիկ պատրիարքի փակման խօսքով աւարտին հասաւ սիրոյ սեղանը:

Պատերազմէն Տարի Մը Ետք

Շարունակուած էջ 1-էն

հաշմանդամ դարձած երիտասարդներ, հարիւրաւոր գերիներ ու անյայտ կորած անձիք: Անգամ մը եւս ողբը պատած է մեր ազգին ու բոլորս ցնցուած ենք, սակայն ոչ յուսահատ: Կը հաւատանք որ, մեր Հայրենիքն ու ժողովուրդը իրենց մէջ պիտի գտնեն բաւականաչափ ուժ յաղթահարելու այս պատուհասը եւս:

Ներկայիս Հայկական բանակը կը գտնուի վերականգնման ու արդիականացման ճանապարհին, հակառակ որ թշնամին ամենօրեայ սահմանային ոտնձգութիւններով կը փորձէ հոգեբանական ճնշում բանեցնել ու նոր պայմաններ ու իրավիճակներ պարտադրել մեզի:

Պատերազմին յաջորդող ամիսները Հայաստանի համար եղաւ փոթորկոտ ժամանակաշրջան մը: Երկրէն ներս ստեղծուեցաւ քաղաքական խոր ճգնաժամ: Ընդդիմադրութիւնը դիմելով փողոցային պայքարի կոշտ միջոցներու փորձեց տիրանալ իշխանութեան, սակայն ժողովրդային

աջակցութեան չարժանանալով չկարողացաւ հասնիլ իր նպատակին: Յունիսին տեղի ունեցան խորհրդարանական արտահերթ ընտրութիւններ, որոնք եկան մեղմելու իրավիճակը:

Նոր կառավարութիւնը այժմ լծուած է պատերազմի ներքին ու արտաքին հետեւանքներու մեղմելու դժուարին աշխատանքին: Որոշ դրական տեղաշարժեր նկատուելի են ներքին ճակատի վրայ: Արտաքին գետնի վրայ անորոշ ու առեղծուածային կը մնայ ռազմավարական դաշնակից Ռուսաստանի դիրքորոշումը: Հակառակ բոլոր յոռետեսական կանխատեսումներուն համոզուած ենք որ, հայրենի իշխանութիւնները պիտի չառնեն այնպիսի քայլեր, որոնք չեն բխիր մեր ժողովուրդի շահերէն:

Ժամանակը կը գործէ ի նպաստ մեզի ու կը մնայ որ մենք հաւատանք ու ապաւինինք մեր ժողովուրդի կամքին եւ միասնաբար փորձենք կերտել աւելի լաւ ու փայլուն ապագայ մը մեր Հայրենիքին համար:

Ազգային ժողովը Հիւրընկալեց Սփիւռքահայ Երիտասարդներ



Սեպտեմբեր 28-ին, ՀՀ ԱԺ Գիտութեան, կրթութեան, մշակույթի, սփիւռքի, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Սիւսակ Գաբրիէլեանը հիւրընկալեց «Սփիւռքի երիտասարդ ղեկավարներ» ծրագրի շրջանակին ներս ճանաչողական այցելութեամբ Հայաստանի մէջ գտնուող խումբ մը սփիւռքահայ երիտասարդները: Ողջունելով հիւրերը՝ Սիւսակ Գաբրիէլեանը խօսեցաւ Հայաստան-Սփիւռք կապի եւ աշխուժ համագործակցութեան կարեւորութեան մասին:

Հարց ու պատասխանի ձեւաչափով զրոյցին ընթացքին պատգամաւորը անդրադարձաւ հայրենադարձութեան վերաբերող օրէնքի անհրաժեշտութեան: Պատգամաւորին խօսքով՝ նախագիծը յաջորդ տարին իսկ պիտի դրուի շրջանառութեան մէջ:

Երիտասարդները առաջարկեցին ներգաղթը դարձնել մասնագիտական՝ ըստ անհրաժեշտ ոլորտներու: Անդրադարձ կատարեցաւ Սփիւռքի դպրոցներէն ներս հայոց լեզուի դասուանողման անհրաժեշտութեան: Նշուեցաւ, որ աջտեղ ունին մասնագէտներու կարիք: Առաջարկուեցաւ ուսուցիչներու թափուր աշխատատեղերուն հարցը լուծել պետական մակար-

դակով: Սփիւռքահայերը բարձրացուցին ՀՀ խորհրդարանին մէջ ներկայացուցիչ ունենալու հարցը՝ կարեւորելով նաեւ իրենց մասնակցութիւնը ընտրական գործընթացներուն: ԱԺ Գիտութեան, կրթութեան, մշակույթի, սփիւռքի, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան հարցերու մշտական յանձնաժողովին նախագահը խոստացաւ բարձրացուած հարցերուն անդրադառնալ վերոնշեալ օրէնքի նախագծի քննարկման շրջանակներէն ներս եւ լուծումներ տալ անոնց:

Խաղաղութեան Մասին

Շարունակուած էջ 2-էն

նախապէս ձայնագրուած էր, թերեւս այդ պատճառով Ալիեւի յայտարարութիւններէն յետոյ ելոյթով փոփոխութիւններ չեն կատարուել. «Բայց դա շատ լաւ հնարաւորութիւն ու ամպիտն էր Ալիեւի կոշտ հռետորաբանութեանը որոշակի պատասխան տալու համար եւ ափսոս, որ այդ հնարաւորութիւնը չօգտագործուեց», - ասաց Ղեւոնդեանը:

Ինչ վերաբերում է ելոյթի շեշտադրումներին, ապա քաղաքագետի խօսքով եւ ռազմագերիների հարցն է շատ կարեւոր, եւ խաղաղութեան օրակարգը, բայց հաշուի առնելով այն փաստը, որ Ատրպէյճանը խաղաղութիւնը կապում է Հայաստանի ինքնիշխանութեան, ինքնուրոյնութեան թուլացման հետ, ապա այս միջոցառումը խաղաղութեան մասին խօսելը գուցէ միջազգային հանրութեան ականջներին համար հաճոյ է, բայց մեր իրականութեան ընկալումներին չի համապատասխանում:

Տաթև-Աղուանի ճանապարհի Շինարարութեան Աշխատանքները Այս Տարի Պիտը Աւարտին. Պապիկեան



«Աշխատանքներ են սկսուել Շուշուուի Տաթև-Աղուանի-ին կապող ճանապարհի շինարարութեան ուղղութեամբ», «Ֆէյսպուք-եան ասուլիս» հաղորդման ընթացքին յայտարարեց Հայաստանի փոխվարչապետ Սուրէն Պապիկեան: Փոխվարչապետի հաղորդմամբ՝ նոր ճանապարհներ կը նախատեսուին նաեւ դէպի Որոտան եւ Բարձրաւան: Անդրադառնալով Սիւնիքի բնակիչներու անհանգստութիւններուն, թէ ինչո՞ւ այլընտրանքային ճանապարհներու աշխատանքները աւելի արագ չեղան, որպէսզի սիւնիքցիները աւելի հանգիստ ըլլային, Պապիկեան նշեց, որ Տաթև-

Աղուանի ճանապարհը աւելի վաղ կառուցելը ֆիզիքապէս հնարաւոր չէր. «Ճանապարհ կառուցելը միայն կապուի-նէլ չէ, մանաւանդ, որ մենք խօսում ենք մի ճանապարհի մասին, որը չէր օգտագործուած: Հիմա շինարարութիւնը լայն թափով ընթանում է»: Փոխվարչապետը յայտնեց, որ ձեռնարկուած են Տաթև-Լձեն ճանապարհի աշխատանքները: Սա, Պապիկեանի խօսքով, հնարաւորութիւն կու տայ, որ բեռնատարները չանցնին Տաթևի Սատանի կամուրջ կոչուող հատուածով: Տաթև-Աղուանին այս տարի կ'աւարտուի, մինչեւ ձմեռ կ'ունենանք բոլորի հողային անցանելի-ճանապարհները:

ՇՆՄԱՆԱԿՆԵՐ

Նախաձեռնութեամբ՝

ՄԱՍԻՍ

ՏՊԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տօթթ. Արշակ Գազանձեան

ՄԵՐ ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ

Ազգային Մտորումներ ու Կեցուածքներ

Գիրքը կը ներկայացնէ՝

Իրաւաբան Ռուբէն Աւշարեան

«Տօթթ. Արշակ Գազանձեան այն հազուագիտ ազգային-հասարակական գործիչներէն է որ տասնամեակներու վրայ երկարող իր քաղաքական եւ գաղափարական աշխատանքները միշտ բնորոշուած են հաւասարակշռուած թեւ հայ իրօքի ՌԵԿՈՒՄԵՆՆԵՐԻ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐՈՎ եւ լուրջ ու չափաւոր արտայայտութիւններով:»

Նոյեմբեր 18, 2021

Երեկոյեան ժամը 7:30-ին

ՀԿԲՄ Կեդրոն

1060 North Allen Avenue, Pasadena, CA 91104

ՄԴՀԿ-ի Պատուիրակութիւնը Մասնակցեցաւ Օթթաուայի Մէջ Անկախութեան 30-Ամեակի Միջոցառումներուն



Երեքշաբթի, 21 Սեպտեմբեր 2021ին, Գանատայի մէջ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան ՆԳ Անահիտ Յարութիւնեանի հրաւերով՝ ՄԴՀԿ-ի անկախութեան կուսակցութեան Մոնթրէալի շրջանէն, պատուիրակութիւն մը մասնակցեցաւ Հայաստանի անկախութեան 30-ամեակին առիթով, Օթթաուայի քաղաքապետարանին առաջ դրօշակի արարողութեան: Արարողութեանը ներկայ էին Օթթաուայի քաղաքապետը, Գանատահայոց թեմի առաջնորդ՝ Տ. Աբգար Եպս. Յովակիմեանը, գանազան երկիրներու դեսպաններ եւ հիւրեր:

Ապա ՄԴՀԿ պատուիրակութիւնը այցելեց ՀՀ դեսպանատուն, որտեղ կուսակցութեան անունով տեղադրուեցաւ ծաղկեպսակ մը՝ ի յարգանս նահատակ զինուորներու

նորդ հայրը նոյնպէս իր հերթին շնորհաւորեց ներկաներուն: Ապա օրուան առիթով, ՄԴՀԿ-ի կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Կիրակոս Թիւթիւնճեան շնորհաւորել է ետք՝ ընթերցեց ՄԴՀԿ-ի Կվյաթարարութիւնը: Հանդիպումը ջերմ էր ու մտերմիկ, որտեղ քննարկուեցան Հայաստանի ու գաղութին յուզող հարցերը:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ՝ ՀՀ հիւպատոս Քրիսթինէ Պետրոսեան, Տէր Դաւիթ Քհնյ. Մարգարեան (Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, Մոնթրէալ), Տէր Կոմիտաս Քհնյ. Միրզախանեան (Ս. Խաչ եկեղեցի, Լաւալ) եւ Մկրտիչ Գանոնճեան (Թեմական խորհուրդի ատենապետ): Իսկ ՄԴ Հնչակեան կուսակցութեան կողմէ ներկայ էին՝ ընկերներ Գրիգոր Թաթուեան (վա-



լիշատակին, որմէ ետք տեղի ունեցաւ հանդիպում մը դեսպանի հետ: Անկախութեան առիթով ՀՀ դեսպանը իր շնորհակալութիւնն ու շնորհաւորանքները փոխանցեց ներկաներուն, ինչպէս նաեւ Առաջ-

րիչ մարմնի ատենապետ), Սարգիս Գաւլաքեան, Յարութ Մուղալեան, Սարգիս Ռեզգեան, Գրիգոր Փամպուլեան, Թորոս Քէշիշեան, Ղեւոնդ Գաւլաքեան եւ Օթթաուայէն ընկ. Միսաք Տէօքմէճեան:

Հայաստանի Անկախութեան 30-ամեակին Առթիւ ՄԴՀԿ Պատուիրակութիւնը Այցելեց ՀՀ Դամասկոսի Դեսպանատուն



Սեպտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 30-ամեայ յոբելեանին առթիւ Սիրիոյ ՀՀ դեսպանութիւն այցելեցին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Դամասկոսի վարիչ Մարմնի անդամները:

ՄԴՀԿ պատուիրակութիւնը շնորհաւորելով դեսպանութեան անձնակազմին խնդրեցին են ՀՀ իշխանութիւններուն փոխանցել

իրենց բարեմաղթանքները եւ խաղաղութեան հաստատման եւ զարգացման ճանապարհին անոնց գործադրած ջանքերուն կուսակցութեան աջակցութիւնը:

Դեսպանը, շնորհակալութիւն յայտնելով ՄԴՀԿ ներկայացուցիչներուն, խիստ կարեորեց Հայաստան-Սիրիա քաղաքացիական պատերազմը ընդլայնումը եւ խորացումը՝ ի շահ Հայաստանի, Արցախի ու Սփիւռքի հայութեան:

Հայաստանը Կարող Է

Շարունակուած էջ 2-էն

մասին չէ միայն: Այստեղ գէոքաղաքական, գէոազմավարական լրջագոյն խնդիրներ կան: Տարածաշրջանում թուրք-ատրպէյճանական եղբայրութիւնն է ուժեղանում, Մեղրիի ազատ տնտեսական գոտու հեռանկարն է հարցականի տակ դրոււմ, եւ, ի դէպ, վրացական ուղու այլընտրանքն էլ է կասկածի տակ: Եւ սա հասկանալու համար խորը գիտելիքներ պէտք էն: Պարզապէս պէտք է գործարարների հետ խօսել եւ հասկանալ Ասիայից Հայաստան ապրանքների ներմուծման երկու նաւահանգիստների ձեռնադրութիւնը: Չմոռանանք, որ վրացական ուղղութեամբ անխափան բեռնափոխադրումներն էլ երաշխաւորել չենք կարող: Եթէ նոյնիսկ բացառենք քաղաքական ինչ-ինչ դրդապատճառները, եղանակային

պայմանների հետեւանքները մենք գրեթէ ամէն տարի գզուծ ենք:

Այս ամէնին յաւելելով՝ Հայաստանի համար դերակատար շահը Հիւսիս-Հարաւ լոգիստիկան է, ոչ թէ Արեւելք-Արեւմուտքը: Ու սրա մասին «ՀՀ»-ն մէկ անգամ չէ, որ խօսել է: Հիմա՝ կամ մնալու ենք կուսցած, մէջքներս՝ կոր ու աշխարհաքաղաքական թատերաբեմում սրա-նրա շահին ծառայող գործիք, կամ մենք մեզ թափ ենք տալիս, ոտքի կանգնում ու ապացուցում, որ ծուռվիզ չենք եւ առաջնորդուելու ենք հայկական շահով: Իսկ որ Հայաստանը կարող է դերակատար լինել Հնդկական ովկիանոս (Պարսից ծոց) Սեւ ծով լոգիստիկայում, հաստատ է եւ անգամ մեզ յղուել են միջազգային համապատասխան մեսիջները: Մնում է գործել:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Հայ-Թուրքական Յարաբերութեան

Շարունակուած էջ 2-էն

մային անդրադարձ կատարելու պահանջ:

Լաւրովը չիշել է, որ ի վերջոյ էդուարդ Նալբանդեանին երկտող է ուղարկել, յորդորելով ստորագրել առանց որեւէ պայմանի, եւ ակնարկելով, որ յետոյ միեւնոյն է արձանագրութիւնները չեն ունենայ հարթ ընթացք: Ամբողջ հարցն այստեղ թերեւս այն է, որ դրանցում ըստ հուլիան ամրագրուած էր հայ-թուրքական սահմանի ճանաչման, իսկ պատմական հարցերի, այդ թւում ցեղասպանութեան վերաբերեալ պատմաբանների ենթադրանքներով ձեւաւորելու հանգամանքը: Եթէ հայ-թուրքական տիրոջթում տեղի է ունենում այդպիսի համաձայնութիւն, ապա Ռուսաստանը զգալիորէն կորցնում է իր ազդեցութիւնը

թուրքիայի վրայ՝ հայկական հարցը զսպելու գործում իր նշանակութիւնից բխող ազդեցութիւնը: Իսկ այդ տեսանկիւնից արժէ լիշատակել նոյն Լաւրովի եւս մի խօսք, որ նա արտաբերեց 2016 թուականի Յունիսին, երբ Գերմանիայի Բունդեսթագը ճանաչեց հայերի ցեղասպանութիւնը, ընդունելով դատապարտող բանաձեւ: Լաւրովը յայտարարեց, թէ, եթէ գործընկերները իրենց պահեն գործընկերութեանը բնորոշ, ապա չեն ունենայ այդպիսի մարտահրաւէրներ ու խնդիրներ: Ի դէպ, այդ շրջանը ռուս-թուրքական գծուցեան շրջանն էր՝ Սիրիայում խոցուած օդանաւի պատճառով: Եւ առաւել հետաքրքրական է, որ հենց 2016 Յունիսին ըստ հուլիան Ռուսաստանն ու թուրքիան հաշտուեցին:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հայոց Ցեղասպանութեան Նուիրուած Խաչքար Յուշարձանի Բացում եւ Նուիրում Փասատինայի Մէջ



Կիրակի, 12 Սեպտեմբեր 2021, յատուկ օր մըն էր, Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցիին եւ Փասատինայի գաղութին:

Աստուայ պաշտամունքի ընթացքին Եկեղեցւոյ Աւագ Հովիւը՝ Վեր. Սերոբ Մկրտիչեան անդրադարձաւ Խաչքարացի տօնին եւ շեշտեց Տէր Յիսուս Քրիստոսի Խաչին կարեւորութիւնը եւ Անոր պատգամը ուղղուած իւրաքանչիւր Հայորդիի:



Ապա խուռներամ ժողովուրդը ուղղուեցաւ Եկեղեցւոյ շրջափակ եւ հոն Վեր. Մկրտիչեան անդրադարձաւ 1915 ի Ցեղասպանութեան, Տէր զօրի կիզիչ անպատներէն Աստուծոյ հրաշագործութեամբ վերապրողներուն, Խաչի պատգամին եւ թէ ինչպէս Քրիստոսակեղրոն հաւատքով եւ հայրենասիրութեամբ լեցուած մեր հայրերն ու մայրերը հասան Փասատինա եւ հիմնեցին առաջին հայկական եկեղեցին Փասատինայի մէջ եւ որպէս զի նոր սերունդը չը մոռնայ անցեալը եւ չը մոռնայ մեր պապերու հողերը ու չը մոռնայ 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը, անոնք Եկեղեցին անուանե-

ցին Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցի:

Եւ այսօր շարունակելով անոնց ժառանգը եւ նկատի առնելով խաչի կարեւորութիւնը, կը կատարենք հայոց ցեղասպանութեան նուիրուած խաչքար յուշարձանի բացում նուիրումը՝ Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցիի շրջափակին մէջ, որը նուիրեց Եկեղեցւոյ նուիրեալ անդամներէն եւ Հոգաբարձութեան նախկին Ատենապետ բարերարուհի՝ Տիկ. Անայիս Տէրեան Պուլղուրճեան, ի յիշատակ իր ամուսնոյն ուսուցիչ եւ տնօրէն Արամ Պուլղուրճեանի եւ ի յարգանք 1915-ի ցեղասպանութեան նահատակներուն եւ անոնց յիշատակը յաւերժացողներուն:

Ապա Եկեղեցւոյ Հովիւը կատարեց Խաչքարի նուիրման յատուկ աղօթքը:

«Հայր Մեր»ի երգեցողութենէն, Օրհնութեան արթ քէն եւ Կիլիկիա մաղթերքի երգեցողութենէն ետք, ժողովուրդը համախմբուեցաւ Եկեղեցւոյ Տէրեան սրահէն ներս եւ հոն տեղի ունեցաւ ճաշ:

Ահաւասիկ Ցեղասպանութեան նուիրուած Խաչքար Յուշարձան մը եւս աւելցաւ աշխարհի միւս յուշարձաններուն կողքին եւ բոլորս կանչուած՝ հաւատարիմ մնալ մեր նահատակներու սրբազան կտակին՝ յիշելով, յիշեցնելով եւ պահանջելով Աստուածային արդարութիւն:

Յիշենք թէ Ցեղասպանութեան նուիրուած Խաչքարը պատրաստուեցաւ Հայաստանի մէջ եւ գործն է Երեւանի Գեղարուեստի Պետական Ակադեմիայէն շրջանաւարտ քանդակագործ՝ Զագար Պալուճեանի, իսկ Յուշարձանը՝ Ճարտարապետ Միքայէլ Եուսուֆեանի:

Փառք եւ պատիւ Հօր Աստուծոյ եւ պայծառութիւն հայրենքին ու հայ ազգին: Ամէն

Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցի Փասատինա

Հայ Քոյրերու Վարժարան Հայաստանի Անկախութեան 30-Ամեակի Նշում



Երկուշաբթի, 20 Սեպտեմբեր 2021-ի առաւօտուն, Գալիֆորնիոյ Հայ Քոյրերու Վարժարանի աշակերտները նշեցին Հայաստանի Հանրապետութեան 30-ամեակը:

Ամերիկայի, Հայաստանի եւ վարժարանի քայլերգներու ունկնդրութենէն ետք, 5-րդ դասարանէն խումբ մը աշակերտներ հայերէնով եւ անգլերէնով հակիրճ տեղեկութիւններ ընթերցեցին անկախութեան մասին, թէ ինչպէս Հայ ժողովուրդը իր ազատատենչ ոգիով դարձեալ տիրացաւ անկախութեան 21 Սեպտեմբեր 1991-ին եւ ստեղծուեցաւ 3-րդ հանրապետութիւնը, ունենալով իր դրօշակը եւ գինանշանը եւ թէ Հայաստան այսօր աշխարհին կը ներկայանայ որպէս զարգացած երկիր իր հարուստ պատմութեամբ, մշակոյթով եւ արուեստով: Աշակերտները նաեւ վերադարձին այն փաստը, որ ամէն տարի հայերը, հայրենիքի եւ սփիւռքի մէջ, մեծ հպարտութեամբ կը նշեն անկախութեան

ենթարկուած մեր հայրենիքը 30 տարի առաջ անկախացաւ, եւ մենք ուրախ ու հպարտ ենք այդ անկախութեամբ: Այո՛, դիւրին



Նոյն դպրոցական տարիներուն է որ՝ պարզ դիպուածով մը, Սաթամեան քայլ կը նետէ թատրոնի աշխարհ: Դասընկեր մը կը համոզէ Գրիգորը որ աշակերտական ներկայացման մը մէջ մանր դեր մը վերցնէ: Ամէջոտ ու հանդիսատեսէն սարսափող տղան դժուարութեամբ կը համոզուի, եւ դողալով բեմ կ'ելլէ: Ներկայացումը յաջողութիւն մըն է: Տնօրէն Թոփճեան մեծ ժպիտով կը մօտենայ, ձեռքը Գրիգորի ուսին կը դնէ, գնահատական խօսքեր կ'ըսէ եւ կը յանձնարարէ որ շարունակէ: «Տնօրէն Թոփճեանի ձեռքը ուսիս վրայ կախարդական ցպիկն էր», կը գրէ, «այդ օրէն ի վեր չեմ դադրած դերասանութենէ»:

1959ին կը հիմնուի Հ.Բ.Լ.Մ.-ի Վահրամ Փափագեան թատերախումբը եւ Գրիգորը տարի մը ետք կը միանայ անոր: «Բեմադրիչ Պերճ Ֆազլեանը եղաւ թատրոնի իմ առաջին ուսուցիչս եւ ես դերասանութեան մասին շատ բան սորվեցայ իրմէ», կը գրէ Սաթամեան:

Պէչրոթի Ամերիկեան Համալսարանի (ՊԱՀ) մէջ տնտեսութիւն կ'ուսանի, միեւնոյն ժամանակ մասնակցելով դպրոցական ներկայացումներու որպէս բեմադրիչ եւ դերասան: Կը միանայ նաեւ Լիբանանեան ժամանակակից թատրոնին եւ բեմ կ'ելլէ Ֆրանսերէն, արաբերէն, անգլերէն եւ հայերէն դերերով:

ՊԱՀն աւարտելէն ետք Լոնտոն կը մեկնի դերասանութիւն ուսանելու: Հոն թէ՛ ուսուցիչները եւ թէ՛ մամուլը կը գնահատեն իր տաղանդը: Լոնտոնի տարիներու փորձառութիւնը կը կազմաւորէ արհեստավարժ թատրոնի մարդը: 1968ին Լիբանան կը վերադառնայ, ուր հայ եւ օտար թատերական կեանքին մէջ աշխոյժ դէմք մը կը դառնայ, միեւնոյն ժամանակ դասաւանդելով ՊԱՀի եւ Հ.Բ.Լ.Մ.-ի վարժարաններուն մէջ:

1972ին Սաթամեանի գլխաւորած Հ.Բ.Լ.Մ.-ի Վահրամ Փափագեան թատերախումբը առաջին սփիւռքահայ միաւորն էր որ Խ

Հայաստան հրաւիրուեցաւ: Անոր երեք շաբթուայ շրջապտոյտը մեծ յաջողութեամբ պսակուեցաւ ժողովուրդին ու քննադատներուն կողմէ: Հոն է որ վաստակաշատ Վարդան Աճեմեանը, տպաւորուած Սաթամեանի տաղանդով, կ'առաջարկէ որ Հայաստան մնայ եւ Սունդուկեանի միանայ որպէս դերասան եւ բեմադրիչ: Սակայն Թատերախումբի պատասխանատուներէն Օննիկ Սարգիսեան դիտել կու տայ թէ Հայաստան արդէն հարուստ է պատրաստուած արուեստագէտներով, մինչ Սփիւռքը շատ աւելի կարիք ունի իր տաղանդին: Համոզուած, Սաթամեան կ'որոշէ Սփիւռքի մէջ շարունակել իր ասպարէզը:

Լիբանանի քաղաքացիական պատերազմը տակնուվրայ ըրաւ այդ դրախտային երկիրը: Ստեղծուած չփոթութեան մէջ արուեստ եւ թատրոն կանք առին բնականաբար: Սակայն անհաւատալիօրէն, այդ անորոշութեան մէջ, Սաթամեան Փափագեան թատերախումբը Եւրոպա յաջող շրջապտոյտի կ'առաջնորդէ: Յետոյ կը սկսի իր ողիսականը. նախ Անգլիա կ'անցնի, ապա Նիւ Եորք, ուր ամերիկեան թատերախումբերու հետ կը բեմադրէ գնազան ներկայացումներ արժանանալով քննադատներու գնահատանքին: Սակայն ամերիկեան բեմերու խոստմնալից ճանապարհէն կը շեղի երբ՝ անսալով ընկերներու առաջարկին, կը միանայ Հ.Բ.Լ.Մ.ի շարքերուն որպէս Ամերիկայի գեղարուեստական դեկավար: Ամերիկեան բեմի կորուստը կը դառնայ հայ թատրոնի շահը:

Աւելի քան 40 տարի ան կը պաշտօնավարէ Բարեգործականի մէջ, այդ ճանապարհով ծառայելով հայկական գաղութներուն, ծաղկեցնելով հայ մշակոյթը՝ ընդհանրապէս, եւ հայ թատրոնը՝ մասնաւորապէս:

Իր թատերական երկար ուղին

լայնօրէն գնահատուած է թէ՛ հայրենիքի, եւ թէ՛ ալ սփիւռքի մէջ: Բազմաթիւ պատուոյ գիրքերու եւ շքանշաններու արժանացած է: Երկու գործող թատերախումբեր կոչուած են իր անունով:

Սակայն, ամէն արուեստագէտի կեանքը կ'անցնի ելեւէջներէ: Սաթամեանն ալ դիմագրաւած է գանոնք: Յստակ է որ գնազան մարդոց վերաբերմունքը, բայց յատկապէս բարեկամ համարուած անձերու դարանակալութիւնը, խոցած են սիրտը: Բայց ինք անյիշաչար, արագօրէն կ'անցնի այդ դէպքերուն վրայէն, առանց անուններ տալու՝ առանց հաշիւ պահանջելու:

Ահա կեանքի մը պատմութիւնը: Արդար եւ հայրենանուէր կեանք մը, ապրուած բեմի վրայ: Հարուստ եւ ստեղծագործ կեանք մը, որ վաթսուն տարի պայծառ կանթեղ մը եղաւ սփիւռքի տակաւ մթազնոյ հորիզոնին վրայ: Զահ մը՝ որ արեւմտահայերէն ճառագայթեց բեմերէն եւ սերունդներ խանդավառեց:

Հաճելի ընթերցումէն ետք, գիրքը գոցելէ առաջ, կարդացողը չի կրնար լուր ցաւ մը չ'զգայ: Ծակատագրի մէկ դաժան խաղն է՝ որ ամբողջ կեանք մը բեմի միջոցաւ Արեւմտահայերէնի պահպանման ու զարգացման համար պայքարելէ ետք, Սաթամեան հարկադրուած կը զգայ իր յուշերը անգլերէն գրելու որպէսզի մատչելի ըլլայ նոր սերունդին: Այն սերունդին, որուն համար ան ճգնեցաւ՝ տող առ տող, բառ առ բառ թատերական երկիսուութիւն սորվեցնելով: Կոտտացող ցաւ մը որ աւելի՛ ու աւելի՛ կը խոցէ ամեն արեւմտահայու սիրտը:

«Թատերական ճանապարհորդութիւնս. Յուշագրութիւն մը» գեղեցիկ գիրք մըն է: Սաթամեանի անձին կամ գործին ծանօթները, շատ մը հին յուշերու կողքին, անոր հարուստ կեանքին նոր ծալքերուն պիտի ծանօթանան: Իսկ անոնք որ բոլորովին անծանօթ են անոր, պիտի կարդան բազմապատակ ու ազնիւ արուեստագէտի մը մասին, որ վաթսուն տարի բեմերէն քաղցրացուց սփիւռքահայ կեանքը:

ՄԵՆՔ ԿԱՊԱՀՈՎԱԳՐԵՆՔ ՁԵՐ ԱՊԱԳԱՆ, ՈՐՊԵՍՁԻ ԴՈՒՔ ԿԵՆՏՐՈՆԱՆԱՔ ՆԵՐԿԱԻ ՎՐԱ



RESIDENT INSURANCE PRODUCER
Accident and Health Agent,
Casualty Broker-Agent, Life-Only Agent, Property Broker-Agent


209 E. Alameda Ave., Suite 204
Burbank, CA 91502

**WE INSURE YOUR FUTURE,
SO YOU CAN FOCUS ON THE PRESENT**



KARAPET S. DEMIRCHYAN CA LICENSE: 0C74479
demkarsinc@sbcglobal.net (818) 913-2414

Մեկրոնեանն Ակաժ Սերը...



ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԵՒՊԵՏԵԱՆ

Սօսի Նալչաճեան ծնած է Կիպրոս: Ան հետագային շատ աւելի ճանչցուեցաւ իբրեւ Սիսի: Իսկ Հայրապետ Թորոսեան ծնած էր Պէյրութ: Ան ալ հետագային ճանչցուեցաւ որպէս Հայրօ: Բայց յատկանշական կը մնայ Սիսի եւ Հայրոյի հանդիպումը, որ տեղի ունեցաւ հայկական վարժարանի մէջ՝ Նիկոսիա, հանրածանօթ Մեկրոնեան կրթական հաստատութեան յարկին տակ: Անոնք հանդիպեցան հայկական վարժարանին մէջ, բայց հանդիպումը աննշան եւ աննպատակ չեղաւ, որովհետեւ անիկա կերտեց ամբողջ կեանք մը: Կեանք մը՝ սիրոյ, նաեւ նոյնքան՝ նուիրուածութեան եւ ծառայութեան: Սէրը՝ իրարու նկատմամբ եւ ընտանիքին: Իսկ այդ սիրոյ արգասիքը եղաւ նուիրումի եւ ծառայութեան համակ կեանք մը՝ հայուն եւ ազգային արժէքներուն համար:

Սիսին տասներեք տարեկանին, երեւի 1950-ական տարիներուն եկած է Մեկրոնեան վարժարան: Իսկ Հայրոն՝ Պուրճ Համուտի գաւազ, հազիւ տասներկու տարեկանին Պէյրութէն եկած է Կիպրոս: Փոքր տարիքէն կորսնցուցած է մայրը, ու երեւի ինք ալ բռնած է ճամբան «մանկութիւն չունեցող մարդոց»... Բայց այս մանկութիւն չունեցող տղան պիտի կերտէր «կեանք ունեցող» հայը, զօրաւոր եւ վճռական՝ իր ազգային առաքելութեան մէջ:

Սիսին կը պատմէ, թէ ինչպէ՛ս առաջին օրը մուտք կը գործէ Մեկրոնեան վարժարան. «Մէկ ժամ տեւեց, երբ վարձու ինքնաշարժով մը հասայ Մեկրոնեան, քանի կ'ապրէինք Նիկոսիոյ հեռավոր արուարձաններէն մէկուն մէջ»: Դպրոցի շէնքի մուտքին ան տեսած է աղջիկ մը, որ կու լար: Աղջիկը Ազատուհի Զինարեանն է, որ եկած էր Յունաստանէն եւ միակ զգացած է Կիպրոսի մէջ, որովհետեւ չէր գիտեր, թէ ինչ պիտի ընէր: «Ազատուհի խնդրեց, որ իր սենեկակիցը ըլլամ գիշերօթիկի բաժինին մէջ: Այդ օրէն սկսեալ եւ մինչեւ այսօր մենք մնացինք լաւ բարեկամներ», կ'ըսէ Սիսին:

Եւ չուշացաւ երկու պատանի հայուհիներու հնարքները,

որոնց մէջ Մեկրոնեանի գիշերօթիկը մնացող տղոց հետ հանդիպումները: Օրին մէկը Ազատուհի եւ Սիսին կը գտնեն գիրք մը, որուն մօտիկ կանգնած էին չորս տղաք: Ազատուհին Սիսին կը փափայ, որ տղոց հարցնեն, թէ որո՞ւ կը պատկանի գիրքը: Սիսին գիրքը կը դնէ չորս տղոց առջեւ, որոնց մէջ գտնուող Հայրոն կը մօտենայ եւ կը վերցնէ գիրքը: Արդեօք գիրքը Հայրոյնն էր, թէ՞ ինք ալ իր կարգին տղայական հնարքի դիմած էր՝ սկսելու համար ծանօթութիւն եւ յարաբերութիւն, որ պիտի տանէր սիրոյ պատմութեան մը, որ կեանք մը պիտի լեցնէր:

Հանդիպման երկրորդ առիթը աւելի դիպուկ դուրս կու գայ: Հայրոն Սիսին երեք դասարան աւելի բարձր էր՝ ներկայանալի եւ լաւ մարզիկ, Մեկրոնեանի պատքեթպոլի խումբի «աստղերէն» մին: Սիսին կը սկսի երթալ եւ դիտել Հայրոն պատքեթպոլի մրցումներուն ընթացքին: Բայց արդեօք միայն պիտի դիտէ՞ր:

Մրցումի մը ընթացքին ալ Հայրոն գնդակը պատահմամբ կը նետէ Սիսիի նստած աթոռի կողմը, եւ գնդակը կը դպչի անոր ոտքին: Հայրոն կը մօտենայ գնդակը առնելու եւ կ'ըսէ. «Քանի գնդակը ոտքիդ դպաւ, ուրեմն պիտի յաղթենք»:

Ճիշդ է՝ Հայրոն պիտի յաղթէր պատքեթպոլի մրցումներուն, բայց ան յաղթեց ամէնէն մեծ մրցումին՝ տիրանալով Սիսիի սիրոյն: Երեւի Հայրոյի դէպի կողով նետած իւրաքանչիւր գնդակի հետ ան պիտի նետէր իր սէրը՝ Սիսիի սրտին մէջ: Այդպիսով Սիսի սիրտը պիտի լեցուէր այդ սիրոյ գնդակներով՝ այնքան, որ այլեւս պիտի սկսէր յորդիլ եւ դուրս գալ:

Եւ այդ յորդած սէրէն դուրս պիտի գար Սիսին նամակը Հայրոյին. «Քեզ շատ կը սիրեմ»: Սիսին յանդիմութիւն կ'ունենայ գրելու նամակը եւ խնդրելու Հայրոյին դասընկերուհիներէն մէկէն, որ յանձնէ գայն: Իրապէս ալ սէրը տկարութիւն չի ճանչնար եղեր: Սիսին գտաւ իր ուժը՝ դուրս բերելու համար իր սէրը: Սէրը՝ Հայրոյին...

Բայց կային Մեկրոնեանի ցանկապատերը, որոնք կը բաժնէին տղաքը աղջիկներէն: Այդ ցանկապատը Հայրոյի եւ Սիսիի

համար միայն աշխարհագրական բաժանում էր: Եւ չուշացաւ Հայրոյին պատասխանը: Ան նամակ մը նետեց ցանկապատի աղջկանց կողմը, ուր Սիսին նստած էր, եւ որուն մէջ ան տուաւ իր խոստովանութիւնը. «Ես ալ քեզ կը սիրեմ»:

Փոխադարձ սիրոյ զգացումներու բացայայտումով կը սկսէր գուրգուրանքը իրարու նկատմամբ: Հայրոն օր մը երեկոյեան ընթրիքի նարինջի իր բաժինը կը բերէ Սիսին. «Ասիկա բաժինս է: Ես չկերայ, որպէսզի քեզի տամ»:

Հայրոն եւ Սիսին իրարու տուած էին իրենց սէրը, որ սկսած էր վերածուիլ իրական կեանքի: Հայրոն կ'աւարտէ Մեկրոնեան վարժարանը եւ կը պատրաստուի վերադառնալ Պէյրութ՝ ուսումը կատարելագործելու: Բայց ինչպէ՞ս երթալ Պէյրութ, երբ Սիսին տակաւին Մեկրոնեան էր, նաեւ՝ իր սիրտը:

Եւ չ'ուշանար Հայրոյին վճռականութիւնը, որ կը ներկայացնէ նաեւ Սիսին. «Կ'ուզեմ երթալ եւ հանդիպիլ ծնողքիդ հետ», կ'ըլլայ խանդավառ երիտասարդին հաստատ կեցուածքը: Բայց եւ այնպէս Սիսին հօր խանդավառութիւնը տարբեր էր Հայրոյինէն: «Գնա՛, տղա՛ս, ուսանէ՛: Երբ վերադառնաս, տեսնենք՝ ինչ կ'ըլլայ: Եթէ մինչ այդ մեր աղջիկը չէ ամուսնացած, կը նայինք...»:

Հայրոյի համար դիւրին չէր այս կեցուածքը: Ան կ'երթայ Պէյրութ, բայց մէկ ամիս ետք դարձեալ կը վերադառնայ Կիպրոս եւ կը դառնայ թուաբանութեան ուսուցիչ Մեկրոնեան վարժարանի մէջ: Իսկ իր աշակերտներէն Սիսին...

Սիսին կը գերազանցէր թուաբանութեան քննութիւններուն, ինչ որ կը գրգռէր դասընկերուհիներուն նախանձը. «Եթէ մենք ալ մեզ սիրող ուսուցիչ ունենայինք, մենք ալ բարձր նիշեր կ'առնէինք»:

1963 թուականին Սիսին եւ Հայրոն կ'ամուսնանան: Սիսին տասնինը տարեկան էր, իսկ Հայրոն՝ քսանչորս:

Հայրոն զգայուն տղայ էր: Թէեւ թուաբանութեան ուսուցիչ էր, բայց երաժշտութիւնը անոր կեանքն էր: Աւելի ուշ ան կ'ըլլայ երաժշտութեան ուսուցիչ՝ Նարեկ ազգային վարժարանին մէջ: Հայրոն եթէ մէկ կողմէ դարձաւ խմբավար՝ երկար տարիներ ծառայելով հայ եկեղեցուց եւ անոր երգչախումբին, բայց նոյնքան վաստակ շահեցաւ կիպրոսյան շրջանակի մէջ՝ իբրեւ ծանօթ երաժիշտ եւ «չեւիթ»:

Ան երկար տարիներ մաս կազմեց Կիպրոսի սիմֆոնիք նուագախումբին՝ սէր եւ յարգանք նուաճելով բոլորին կողմէ:

Սիսին նուիրուեցաւ Կիպրոսի հայկական ռատիօսամին: Ան աւելի քան քառասուն երկար տարիներ մեծ նուիրուածութեամբ եւ սիրով ծառայեց՝ հաշիւահարկային հարկերու հաշիւները իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն Հ.Մ.Մ.ի անդամներուն եւ վարչութեան, իրենց բարոյական եւ նիւթական աջակցութեան համար: Առ այդ կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները՝ Հ.Մ.Մ.ի վարչութեան \$100 «Միս» շաբաթաթերթին \$100

Թեամբ եւ սիրով ծառայեց՝ հայուն «ձայնը» լսելի դարձնելու ամէն կողմ:

Սիսին հետ երկար տարիներ կրցայ գործակցիլ, երբ հայերէն հոգեւոր եւ այլ յայտագիրներ կը պատրաստէինք ու կը սփռէինք: Իսկ Հայրոն արդէն ֆիզիքապէս սկսած էր տկարանալ, երբ ես իրեն հանդիպեցայ եւ գինք անձնապէս ճանչցայ: Մէկ-մէկ պիտի հարցնէր ինձի, երբ կրնար. «Մեր Պուրճ Համուտը ինչպէ՞ս է»: Հայրոն չէր կրնար մոռնալ տունը, անոր կարօտն ու սէրը:

Հայրոն իր երկրային կեանքին հրաժեշտ տուաւ 2012 թուականին՝ տարեդարձէն տասներկու օր առաջ: Սիսին դադրած է աշխատանքէ եւ կ'ապրի հանգստեան իր կեանքը: Բայց Հայրոյին սէրը չէ դադրած իր կեանքէն: «Նկարը տունը հեռատեսիլին վրայ է: Կ'ապրիմ հետը ամէն օր», ըսաւ Սիսին:

Կիպրոսի սիմֆոնիք նուագախումբը 24 մայիսի 2012-ին յուշ երեկոյ մը կազմակերպեց Հայրոյի վաստակին: Անոնք Սիսին յանձնեցին շքանշան մը՝ յերախտագիտութիւն Հայրոյի երկար տարիներու երաժշտական վաստակին եւ ներդրումին Կիպրոսի մէջ:

Հայրոն եւ Սիսին՝ երկուքն ալ պարգեւատրուած են Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով՝ իրենց ծառայութեամբ լեցուն կեանքին համար: Հայրոյին կեանքին կարգախօսն էր՝ «Ծառայէ եւ յարգէ»:

«Հայրս հրեշտակ մըն էր, որ այս աշխարհը եկաւ», կ'ըսէ Մարալը՝ Հայրոյի եւ Սիսիի դուստրը: Հրեշտակ մը, որուն սիրտը երբեք չդադրեցաւ բաբախելէ...:

Ներկայ էի Հայրոյի յուղարկաւորութեան արարողութեան: Թէեւ մարմինը դադրած էր շնչելէ, բայց կը զգայի անոր սիրտը, որ չէր դադրած բաբախելէ: Եւ այդ բաբախող սրտին մէջ կը զգայիր սէրը Սիսին... Սէրը՝ երաժշտութեան... Սէրը՝ արժէքի կեանքին... Սէրը՝ հայուն:

Այս Մեկրոնեանէն սկսած սէրն է: Հայրոյին եւ Սիսին սէրը: Սէրը, որ կերտեց անձնական եւ ընտանեկան կեանք, բայց նաեւ՝ գաղութային եւ ազգային: Եւ այս այն սէրն է, որ կը շարունակուի եւ կանգ չ'առնէր: Կը շարունակուի եւ կը կերտէ կեանքեր: Կեանքեր՝ սիրոյ եւ արժէքի:

Պիտի շարունակե՞նք կերտել այս կեանքերը՝ սիրոյ եւ արժէքի:

Եթէ հայուն կեանքը պիտի դնենք պատմութեան շարունակականութեան մէջ, ապա պատասխանը պիտի ըլլայ՝ այո՛: Մեկրոնեանէն սկսած սէրը, որ կը շարունակուի եւ կը կերտէ նոր կեանքեր:

Պահենք եւ կերտենք այս կեանքերը...:

Շնորհակալիք

Գրիգոր եւ Անժէլիքա Լաչինեաններու ամուսնութեան առթիւ Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սոնա Լաչինեաններ իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն Հ.Մ.Մ.ի անդամներուն եւ վարչութեան, իրենց բարոյական եւ նիւթական աջակցութեան համար: Առ այդ կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները՝ Հ.Մ.Մ.ի վարչութեան \$100 «Միս» շաբաթաթերթին \$100

UWC Դիլիջանի Նոր Ակադեմիական Տարուայ Ակիզբը Եւ՝ Եօթերորդ Տարեդարձը



Հայաստանի անկախութեան 30-ամեակի օրը UWC Դիլիջանը նշեց իր 7-րդ տարեդարձը: Այն համընկաւ ՄԱԿ-ի Խաղաղութեան միջազգային օրուայ եւ՝ UWC դպրոցների օրուայ հետ: Աշխարհի տարբեր մասերում գտնուող UWC դպրոցները նշում են այս օրը որպէս UWC շարժման առաքելութեան եւ՝ արժէքների մեծարման օր:

Այս օրը UWC Դիլիջանի համայնքը նշեց միջոցառումների շարքով: Օրը սկսուեց ծառատունկով: Դպրոցի այգում տնկուեց Գրիգորեանի ալոնեի (Crataegus gregorianii) ի յիշատակ UWC Դիլիջանի բարեկամ եւ՝ հովանաւոր Վարդան Գրիգորեանի՝ Նիւ Եորքի Քարնիկի կորպորացիայի նախագահի: Գրիգորեանի ալոնեին նոր յատուկ տեսակ է, որը յայտնաբերուել է Ե. Գաբրիէլեանի եւ՝ Մ. Սարգսեանի կողմից Դալարի կիրճում եւ՝ կոչուել է ի պատիւ Վարդան Գրիգորեանի: UWC Դիլիջանի գրադարանը հպարտօրէն կրում է Վարդան Գրիգորեան ուսումնասիրութեան կեդրոն անուանումը:

UWC Դիլիջանի համահիմնադիրներ Ռուբէն Վարդանեանը եւ՝ Վերոնիքա Զոնաբենդը մասնակցեցին դպրոցի «Վերահիմաստաւորելով ապագան» թեմատիկ սեմինարներին:

«Դպրոցը կառուցելուց ի վեր, ինձ համար ամենալուրջ պահերից մէկն այն էր, երբ տեսայ UWC Դիլիջանի առաջին ուսանողներին՝ երեխաներ 94 երկրից, ովքեր երազելու քաջութիւն էին ունեցել: Այսօր, երբ քայլում ես Դիլիջանում, տեսնում ես տարիներ շարունակ արուած գործերի արդիւնքը: Վստահ եմ, որ մեր ուսանողները դառնալու են մեր տեսլականի ղեկավարները եւ՝ Հայաստանի ղեկավարները. նրանք ունեն այդ ձգտումը, համբերատարութիւնը, սովորութիւնը, մեծ սիրտ եւ՝ կարեկցանք այլոց հանդէպ», - ասաց UWC Դիլիջանի համահիմնադիր եւ՝ խորհրդի նախագահ Վերոնիքա Զոնաբենդը:

2021-22 ուսումնական տարում UWC Դիլիջանը դռները բացեց գրեթէ 80 երկրից 220 ուսանողների առջեւ: Դպրոցի ուսուցչական անձնակազմը բաղկացած է 15 երկրի 36 ուսուցիչներից: Դպրոցի անձնակազմի 78 անդամներից 44-ը Հայաստանից են: Ուսանողների մեծ մասը UWC Դիլիջանում սովորելու հնարաւորութիւն է ստանում անհատ հովանաւորների, կազմակերպութիւնների եւ՝ մասնաւոր ընկերութիւնների առատաձեռն օժանդակութեան շնորհիւ: Այսպէս՝ ուսանողների 20%

սովորում է լրիւ, իսկ 60% մասնակի կրթաթոշակով:

2021թ. շրջանաւարտների ակադեմիական արդիւնքները դպրոցի պատմութեան ընթացքում ռեկորդային են եղել չնայած համավարակի եւ՝ Հայաստանում տեղի ունեցած պատերազմի առաջացրած դժուարութիւններին: Ուսանողների 99.1% յաղթահարել է անցողիկ շէմը: Ուսանողների գրեթէ մէկ քառորդն ստացել է 40 բալ եւ՝ աւելի, ընդ որում՝ զգալիօրէն աճել է շնորհուած երկրագործ ղեկավարների թիւը:

Չնայած համավարակին մեր ուսանողները հնարաւորինս մասնակցել եւ՝ իրենց ներդրումն են ունեցել համայնքի կեանքին: Ամառային ամիսներին ստեփանապոլսից իջելի Նազարեանը եւ՝ ամերիկահայ Անդրանիկ Գալոյեանը, Ստեփանապոլսի մշակույթի կեդրոնի աջակցութեամբ կազմակերպել են անգլերէնի եւ՝ մաթեմատիկայի երկշաբաթեայ ուսումնական ծրագիր: «Մենք հիացած էինք ստացուած արձագանքով եւ՝ ծրագրի հանդէպ ցուցաբերուած հետաքրքրութեամբ: Մեր գիտելիքները այլ երեխաների հետ կիսելը մեզ համար եւ՝ սօսակար փորձ էր», - նշում են նրանք:

UWC Դիլիջանն ունի շրջանաւարտների վեց սերունդ՝ 620 շրջանաւարտ 105 երկրից: Նրանք շարունակում են մասնակցել UWC Դիլիջանի համայնքի կեանքին՝ լրիւ կամաւորական աշխատանքի, թէ ֆինանսական աջակցութեան տեսքով: Շրջանաւարտների 20% կատարել է որեւէ կամաւորական աշխատանք UWC Դիլիջանի ամառային ճամբարի, Աւրորա մարդասիրական ծրագրի, ինչպէս նաեւ՝ դպրոցի այլ ակտիւութիւնների շրջանակում:

«Անձնային աճ՝ հա թէ ինչն է բնորոշում այն տարբեր փորձառութիւնները, որը ես անձամբ ունեցել եմ UWC Դիլիջանում», - նշում է այս տարուայ մեքսիքացի շրջանաւարտ էմիլիօ Ռոսաս Գուտիերասը: «Ես Հայաստան եկայ այն համոզմամբ, որ անկախ ակնկալուող մարտահրաւէրներից լիարժէք կը ճանաչեմ եւ՝ կը վայելեմ ինձ հիւրընկալող երկիրը: Առաջին իսկ օրուանից հաւատարիմ եմ եղել իմ այս ներքին որոշմանը: Ես իմացայ, թէ ինչ է հայկական հիւրասիրութիւնը եւ՝ գտայ հաւատարիմ ընկերներ: Մեր ջանքերն իզուր չեն անցել: Համավարակի առաջին տարուայ վերջում յայտնի դարձաւ, թէ որտեղ եմ շարունակելու կրթութիւնս: Ընդունուել եմ ԱՄՆ Ատլանտայի էմորի հա-

Հայաստանի Եւ Լեհաստանի Պետական Արխիւները Ու Լեհաստանի Մէջ Հայկական Մշակոյթի Հետազօտական Կեդրոնը Յուշագիր Կը Ստորագրեն



Հայաստանի ազգային արխիւ կազմակերպութեան տնօրէն Գրիգոր Արշակեան ընդունած է Լեհաստանի մէջ հայկական մշակոյթի հետազօտական կեդրոնի ներկայացուցիչ, լեհ պատմաբան, հայագէտ Եաքուպ Օշիեցքին:

Հանդիպման ընթացքին նշուած է, որ փոխգործակցութեան շրջանակին մէջ կը նախատեսուի յուշագրի ստորագրում՝ Հայաստանի ազգային արխիւի, Լեհաստանի պետական արխիւի եւ Լեհաստանի մէջ հայկական մշակոյթի հետազօտական կեդրոնին միջեւ:

Ջրուցակիցները անդրադարձած են Լեհաստանի մէջ հայկական համայնքի նշանակութեան, հայերու նկատմամբ ցուցաբերուող պետական բարձր հոգածութեան, մասնաւորապէս Լեհաստանի Սէյմի 2017-ին ընդունած «Կազի միւր Մեծ թագաւորին կողմէ Լեհաստանի հայերուն շնորհուած արտօնութիւնները 650-ամեայ տարեդարձի մասին» յատուկ բանաձեւին, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Լեհաստանի Հանրապետութեան կառավարութեան միջեւ մշակոյթի, գիտութեան ու կրթութեան ոլորտներում մէջ փոխգործակցութեան: Այդ ծիրին մէջ Եաքուպ Օշիեցքին նշած է, որ Հայաստանի ազգային արխիւի եւ Լեհաստանի մէջ հայկական մշակոյթի հետազօտական կեդրոնին միջեւ համագործակցութիւնը մեկնարկած է 2019 թուականին:

«Գրիգոր Արշակեանը, բարձր գնահատելով հայագիտութեան ոլորտին մէջ օտարազգի գիտնա-

կաններուն կատարած նշանակալի ներդրումը, պատրաստակամութիւն յայտնած է աջակցելու Լեհաստանի մէջ հայկական մշակոյթի հետազօտական կեդրոնին:

Նշուած է, որ փոխգործակցութեան շրջանակին մէջ կը նախատեսուի յուշագրի ստորագրում՝ Հայաստանի ազգային արխիւի, Լեհաստանի պետական արխիւի եւ Լեհաստանի մէջ հայկական մշակոյթի հետազօտական կեդրոնին միջեւ», կ'ըսուի հաղորդագրութեան մէջ:

Երկուստէք կարեւորուած է հայ-լեհական դիւանագիտական յարաբերութիւնները 30-ամեակին նուիրուած համատեղ հետազօտութիւնները կատարուած ու միջոցառումները կազմակերպումը, ինչպէս նաեւ փոխադարձ այցելութիւնները միջոցով փորձի փոխանակումը:

Լեհաստանի մէջ հայկական մշակոյթի ուսումնասիրութիւնները կեդրոնը հիմնադրուած է 2019-ին՝ Քրաքով քաղաքի Եակեյոնեան համալսարանին մէջ: Այն հիմնադրուած է եւ կը ֆինանսաւորուի Լեհաստանի Գիտութեան նախարարութեան կողմէ ու Լեհաստանի մէջ մեծ հեղինակութիւն վայելող Արուեստներու եւ գիտութիւններու ակադեմիայի կառուցուածքային ստորաբաժանումն է: Կեդրոնի ծրագրերը գլխաւոր առանցքը լեհահայութեան պատմութեան ու արխիւային մատենագիտութեան ուսումնասիրութիւնն է, արխիւային եւ վերլուծական հետազօտութիւնները կատարուած ու արդիւնքները տարածումը:

մալարան՝ Վուդրաֆի կրթաթոշակով: UWC Դիլիջանում ստացած փորձառութեան եւ՝ դրա արդիւնքում ունեցած անձնային աճի շնորհիւ է, որ հենց ինձ տրամադրեցին այս կրթաթոշակը»:

UWC Դիլիջանը յետխորհրդային տարածքում հիմնուած առաջին միջազգային դպրոցն է, որը գործում է UWC կրթական մոտեւորով: Դպրոցն իր դռները բացել է 2014 թուականին Հայաստանի Դիլիջան քաղաքում: Այն ներկայումս ունի 220 ուսանող աշխարհի աւելի քան 80 երկրից, իսկ դասախօսական կազմը ներառում է 36 ուսուցիչ՝ 15 երկրից:

UWC Դիլիջանի ստեղծման գաղափարը պատկանում է հանրօգուտ ներդրողներ եւ՝ սոցիալական ձեռներէցներ Ռուբէն Վարդանեանի եւ՝ Վերոնիքա Զոնաբենդին, որոնք այն կեանքի են կոչել այլ հիմնադիր նուիրատուների աջակցութեամբ: Քոլեջը կառուցուել է աւելի քան 330 բարերարի առատաձեռն նուիրատուութիւնների շնորհիւ: Քոլեջի ընդունելութեան քաղաքականութիւնը հիմնուած է ֆինանսական աջակցութեան կարիքի վրայ եւ՝ թոյլ է տալիս դիմելու բոլորին՝ անկախ սոցիալ-տնտեսական կացութիւնից: Ուսանողների աւելի քան 80% ստանում է լրիւ կամ մասնակի կրթաթոշակ:

UWC Դիլիջանում ուսումնասիրութեան եւ՝ դասաւանդման գործընթացն իրականացուած է Սիլվազապի բակալաւրիատ « (International Baccalaureate, IB) դիպլոմային ծրագրով, որը գնահատուող ծրագիր է՝ նախատեսուած 16-19 տարեկան երիտասարդների համար:

Արմին-Հայերի Մի Քանի Բարոյացուցիչ Դեպքերի Մասին

«Հողը մի կենդանի էակ է, նա ունի իր հոգին: Առանց հայրենիքի, առանց հարազատ հողի հետ սերտ կապի, մարդ չի կարող գտնել իրեն, իր հոգին: Ես համոզուած եմ, որ առանց հողի արուեստագետ չի եղել: Հողի սիրտը գտնուում է մարդու սրտի մէջ: Ամէն ինչ սրտից է բխում, ամէն ինչ սրտով է սկսուում: Իմ խորհուրդ խորհիւրդ եղել է իմ սէրը դէպի մայր հողն ու ժողովուրդը: Այդ սէրը ես արտայայտել եմ արուեստով, որն իմ հոգին է: Ուրիշ հաւատ ու սէր ես չեմ ունեցել...»:

Մարտիրոս Սարեան

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Հայոց պատմագրութիւնում չիշտակուած են բազում բարոյացուցիչ դէպքերի մասին: Հայ մարդը արբի է, Հայ ազգի մտաւոր «Պանթէոնում» չիշտակուած են մարդկային հարաբերութիւնների գագաթական, մտաւոր յեղումներ, որոնք կազմաւորուել են նրա մտքի կարողականութեան շնորհիւ: Պատմիչները նկարագրել են Ասորեստանցիների գերի տարած մարդկանց նկատմամբ կատարուած տանջանքների նկարագրութիւնը, ահաւոր են, չիշտակուած ոչ: Աշխարհը չի գնահատում Հայոց բանակների ասորեստանցիների հանդէպ դիմադրութիւնն ու նրա յաղթանակները արգելափակել էին նրանց առաջխաղաղումը հիւսիս ու արեւմուտք: Արեւմուտքը չանսաց Պարսկաստանի նախագգուշացումներին, որ արեւմուտք էր թափանցում արեւելքից ներխուժած դաժան մի ցեղ, առաջարկել կասեցնելու նրա առաջընթացը... չանսացին, տապալեցին իրենց մայրաքաղաքը, կողոպտեցին այն ինչ կար, իրենց օսմանի թելադրանքով թողեցին միայն պատերը, յոյների երկիր, սերբերի երկիր, հասան Վիեննայի դարպասներ, միայն տարերքի գորութիւն էր կարողացել քանդել նրանց բանակի միաւորները:

Այս գրութիւնում առանց Արամ Նահապետի մասին չիշեցնելու այն ոչ «Լիարիւն» պիտի լինէր: Արամ Նահապետ ծնուել էր մ.թ.ա. 1846/1845 թուականներին, Արմաւիր աթոռանիստ քաղաքում, մահացել մ.թ.ա. 1769 թուականին: Արմաւիր քաղաքը յետագային անուանուել Արգիշտիի ինչ, եղել Արմինա երկրի Արգիշտի-Արամայիս թագաւորի աթոռանիստ: մ.թ.ա. 1827-1769 թուականներին հիմնադրել է Հայքի թագաւորութիւնը: Արամ որդին էր Հայկի ցիլից Հարմա Հայկագունիի, հանդիսացել նրա թագաւորութեան տոհմի Նահապետը: Հայկեան Արամի մասին դիւցածներգութիւնը գրել է պատմաբան Մար Ապաս Կատինասն: Ըստ Մովսէս Խորենացիի, Հայկեան Արամը Հայկագունիների արքայատոհմի վեցերորդ ներկայացուցիչն էր: Եղել մ.թ.ա. երկրորդ հազարամեակի 19-18 դարերի հայկական միասնական Հայք պետութեան հիմնադիրը: Ըստ պատմաբանների Մովսէս Խորենացիի եւ Սեբեոսի Արամ եղել Արատտա Հայքի թագաւորութեան առաջնորդների ցանկում 32-րդ Նահապետը: Արամը գահակալել է որպէս Նահապետ, ապա գահակալել որպէս Հայքի Արարատեան թագաւորութեան արքայ: Նա թագաւորած եղել հրեաների նահապետ՝ Աբրահամի աստիճան:

Մովսէս Խորենացի գրել է՝ «Այս Արամը տարիներ ապրելուց սերել Արային, որից յետոյ շատ տարիներ ապրելով մահացել»:

Արամ, «Հայաստան» անուան

գատորոշման համար պայքարել շրջապատի սեմական ու իրանական աշխարհների դէմ: Պարսից արքայ Դարեհի Բհիստունի արձանագրութեան մէջ չիշտակուած՝ «Գնացի նուաճեցի Արմինա երկիրը»: Շրջապատի իրանական աշխարհներ Հայք պետութիւնը ճանաչել են Արմինա-Արամի անունով, ընդհանրապէս իրանական արձանագրութիւններում բառամիջի ձայնաւորները չեն գրուել, ուստի «Արմինա» երկիրը նշանակել «Արամ»ի երկիր: Արմինա Արամի երկրի անունը յոյները հնչիւնափոխել են Արմէն անունով, երկիրն էլ, Արմէնիա որը մինչեւ հիմա էլ յոյները ու այլ ազգեր հայերին ճանաչում որպէս Արմէն-Արմէնիա: Մովսէս Խորենացին այսպէս է բնորոշել Արամին՝ «Ես սիրում եմ ըստ քաջութեան, այսպէս կոչել Հայկ, Արամ, Տիգրան, որովհետեւ քաջերի սերունդները քաջերն են»:

Մովսէս Խորենացին, Արամի մասին գրելուց ասել՝ «Լաւ է հայրենիքի համար մեռնել քան տեսնել թէ ինչպէս են օտարազգի ազգերը ոտնակոխ անում իր հայրենիքի սահմանները, օտարները տիրում արիւնակից հարազատներին վրայ»:

Մովսէս Խորենացին գրել նաեւ «Եւ ծնաւ Արամը բազում ուսուրեր ու դուստրեր, որոնցից անդրանիկը Արա Գեղեցիկն էր»: Նրանցից ոչ ոքին իրաւունք տուել գրի առնել՝ «Մեր երկրում էլ գրելու եւ չիշտակութեան արժանախ շատ սխրագործութիւնների մասին»:

2020 թուականի վերջին ամիսներին թշնամու դէմ կռու եղաւ, ապիկար գորավարների խաղով ու ոչ ճիշտ կազմաւորութեամբ պարտուեց Հայաստանը, յանուն հայրենիքի բազում զինուորներ ընկան պատերազմի դաշտում: Ընկածների հայրեր երկրի վարչապետից պահանջում են իրենց որդիներին: Սարսափելի է ընկած որդիների ու հարազատների վիշտը, Սարսափելի է երեւակայել, որ իրիկունը գաւակը չի վերադառնալու տուն, ընկածների մանչեր զինուորական հագուստով տեսնելով «Հայրիկ» կանչելով վազում նրանց գիրկը: Հայք բոլոր ժամանակներում կռուել թշնամու դէմ դեռ հարիւր տարիներ առաջ անհասար մարտում զարկին դուշմանին, զարկին Վէհիպ Փաշայ բանակին, այն բանակին, որ մի քանի տարիներ առաջ Կալիփոլի ճակատամարտում պարտութեան մատնել դաշնակից բանակներին: Երկրում Առաջին հանրապետութիւն եղաւ: Քաջեր, իրենց հողի կռուի պաշտպանութեան ոգով կռուի ելած, յախուռն գորավարներ պատերազմում յաղթանակել, տարիներ առաջ նոյն թշնամու դէմ կռուի ճակատամարտերում յաղթանակեց հայք, վեց հարիւր տարիներ յետոյ Հայաստանի այսօրուայի փոքրիկ երկրում «Հայաստանի Առաջին Հանրապետութիւն» եղել: Այս նոր կռուում պարտուեց հայք, վերագինուում է երկիրը կռու կամ խաղա-

ղութիւն: Բոլոր ժամանակների կռիւներում ընկում են ջահել տղաներ, որքում ծնողներ, ասացէ՛ք ով պիտի պաշտպանէր հայոց շէնքը, մայ մանչերին, մայրերին, հայա եթէ պաշտպանական գծերը ճեղքուէին ու թշնամին վայրագ հաւքերի նման խուժէր հայոց բնակավայրեր, հայոց շէնք, սպաննէին մեծահասակներին, քու տղայի մանչերին, տղադ կռու էր գնացել, որ պաշտպանէր Ձանգեղուր, Սիւնիք, Արարատ, կռուին զարնուէր էր տղադ... ո՛վ ո՛ւմից պիտի պահանջէ... հայոց կռուին էր մարել տղայիդ ճրագը... որ լոյս լինէր հայոց աշխարհում:

Յաղթանակի զիշերն է այս տօնական, Հա՛րս, եղ լեցուր ճրագին, Պիտի դառնայ կռուէն տղաս յաղթական, Հա՛րս քիթը ա՛ռ պատրոյգին: Սայլ մը կեցաւ դռան առջեւ, հորին քով, Հա՛րս, վառէ՛ լոյսը ճրագին: Տղաս կու գայ ճակատն հպարտ դափնիով: Հա՛րս, բե՛ր ճրագը շէմին: Բայց... սայլին վրայ արիւն ու սուզ բեռքեր էն... Հա՛րս ճրագը առդին երկարէ, Հերոս տղաս հոն զարնուած է սրտէն, Ախ, հա՛րս ճրագը մարէ... Հարսեր, ծնողք այս քերթուածը մէջբերի, որում տղան զարնուել էր դուշմանի դէմ կռուում, իր նախնեաց հողը իր արիւնով է սրբացրել, որ իրենց շէնք ու տներ չփլուէին, այգիներում նորէն արեւներ լինէին, նրանց հոսած արեան փոխան խաղողի ողորդները քամած գինի նրանց շիրմներին, երազներում գրկէ՛ք նրանց, հարս, տան ճրագը վառ պահիր, ինչպէս ձեր երկրի արեւմուտքում մարտիրոսացածների անուններով նորէն շատ մանչեր եղան, ձեր գեղդաստաններում էլ մանչեր կը գան, վիշտը ահաւոր, անասելի է, հարս, ձեր տան շատ ճրագներ թող ծիծաղեն, այն վեր պահած աղօթէ՛ք զարնուածների հոգիներին յաւերժութիւն լինէր...:

Պատմեմ Մովսէս Խորենացիի չիշտակումներից: Այս Արամը տարիներ ապրելով ծնաւ Արային, որից յետոյ էլի շատ տարիներ ապրելով մեռաւ: Սակայն ինչու այդ գործերը չէին չիշտակել իրենց բուն մատեաններում կամ մեհեկան մատեաններում, յայտնի չէր: Հայաստանում իշխում էր Պարսկաստանում թագաւորող Արշակ Մեծը: Իր եղբայր վաղարշակը կառավարում էր Հայաստանը: Վաղարշակ ուղեցել է իմանալ ո՞վքեր էին կառավարել իր երկիրը: Պարսկաստանում հարկաւոր եւ կարեւոր չէին համարել օտար ազգերի, հեռուոր աշխարհների հին լուրերն ու զրոյցները իրենց թագաւորների կամ մեհեանների մատեաններում գրել, պատիւ ու պարծանք չի եղել օտար ազգերի քաջութեան գործերը չիշտակել: Մար Ապաս Կատինասն պատմել է, որ փոքր մարդկանց ձեռքով գոլասանական երգերից հաւաքուած են եւ պահուում են արքունի դիւանում: Մար Ապասը մի ուրիշ պատճառ էր համարել, թէ իմացել, որ Պարսկաստանի թագաւոր Նինոսը հպարտ ու անձնասէր մարդ լինեց տալ ամէն տեսակ քաջութիւն ու կատարելիութիւն, հրամայել այրել բազմաթիւ մատեաններ եւ նախնեաց մասին զրոյցներ, որոնք

վերաբերում էին գանազան տեղերի եւ առանձին մարդկանց քաջութեան գործերին: Գրել միայն այն ինչ էր իրեն էր վերաբերում:

Հայաստանի վաղարշակ թագաւորը թողութ էր գրել առ Պարսկաստանի թագաւոր Մեծն Արշակ, խնդրել իմանալ ովքեր էին կառավարել իր երկիրը: Արշակ Մեծ թոյլատրել էր Մար Ապասին թագաւորական դիւանում եղած նիւթերից իմանալ Հայաստանի մասին: Ո՞րտեղից էին պարսկական դիւանում եղած մատեանները: Այլեքսանդր Մեծ մ.թ.ա. 323 թուականներին գրաւելով Բաբելոնը, Նինուէն ու արեւելքը, հրամայել թագաւորական պահոցների մատեանները կարգաւորել, թարգմանել Յունարէնի եւ ի պահ տալ նրանց մատերադարաններում: Ահա այդ մատեաններում էր նաեւ Հայոց երկրի ու Հայաստանի մասին տեղեկութիւններ: Մար Ապաս Կատինա հաւաքել գանազան մատեաններում չիշտակուած Հայաստանն ու հայերի մասի տուեալներ, ներկայացրել իր թագաւորին: Մովսէս Խորենացի շատ տեղեկութիւններ քաղել այդ մատեանից ու ամփոփել իր «Հայոց Պատմութիւն» գրքում:

Արամ սերեց որդի Արային: Արամի մահից յետոյ իշխանութիւնը անցել որդի Արային, նրա արտասովոր քաջութեան ու գեղեցկութեան համար կոչուել՝ Արա Գեղեցիկ: Հեթանոս հայերի Արայի մասին հավատալիքները մեռնող ու յաւնող աստուծոյ, հայրենասիրութեան, ընտանեկան հաւատարմութեան եւ մարդկային ողջախոհութեան մասին է: Ինչքան ճշմարիտ ու սրբազան է հազար-հազար տարիներ առաջ էլ հայու գեղից «ծիներից ծագած նման մարդկային հաւատարմութիւնը իր հայրենիքի, իր աստուծաների, մարդկանց ողջախոհութեան մասին: Ընտանեկան հաւատարմութիւն, յանուն կնոջ մերժել գահ, փառք: Հազար-հազար տարիներ առաջ հայերի սերունդների հաւատարմութիւնը աստուծոյն, հայրենիքին, ցեղի ծիների արձագանգն է, իր պատմութեան ընթացքում չի չիշտակուած գերի: Հայաստանում ընտանիքները ճաշասեղան են նստել ողջ որդիներով ու թոռներով, տան տարեցը համարուել «Աւագ»-ը: Մովսէս Խորենացին Արայի մասին գրել է, որ Ասորեստանի թագուհի Շամիրամը (Սեմերէթ-Աղաւնի) լսելով Արայի արտասովոր գեղեցկութեան մասին ցանկացել տիրել նրան, ամուսին Նինոսի մահուանից յետոյ մեծամեծ ընծաներով պատուիրակներ ուղարկել Արա-յի օտ, առաջարկելով Նինուէ գալ, ամուսնանալ իր հետ: Շամիրամ բազում անգամներ նորէն պատուիրակներ ուղարկել, Արան մերժել նրա առաջարկները, հաւատարիմ մնացել իր կին Նուարդին: Շամիրամ սաստիկ զայրացել, զօրքով եկել Հայաստան պատերազմելու՝ Զօրավարներին յորդորել նրան ողջ գերեւարել: Ճակատամարտ Արայի դաշտում, Շամիրամ հրամայել կռուում նրան ողջ պահել: Մարտում ընկել է Արան, Շամիրամ հրամայել Արայի դին դնել իր ապարանքի վերնատանը, յարալեզ աստուածները գային լիզէին նրա դին, որ Արան կենդանանար... ի գուր: Հայոց քաջ ու գեղեցիկ արքան իր կին Նուարդի ու հայրենիքի համար զոհուել էր ...:

ՄԱՅԱԶԴ



ՍԱՄՈՒԷԼ ՄԱԹՈՍԵԱՆ
(1935-2021)

Սրտի դառն կակիծով կը գոժենք մեր սիրելի ամուսնուհին, եղբոր եւ հարազատին մահը, որ պատահեցաւ Կիրակի առաւօտ Սեպտեմբեր 19, 2021-ին:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, Հոկտեմբեր 5-ին առաւօտեան 9:30-ին Hollywood Hills, Forest Lawn գերեզմանատան Church of the Hills մատուռին մէջ:

Սգակիրներն են,
Այրին՝ Կրէյս Շնորհիկ Մաթոսեան
Քոյրերը՝ Եսթեր Մաթոսեան, Լիտիա Մալճեան եւ ընտանիք
Եղբայրը՝ Վեր. եւ Տիկ. Յովսէփ Մաթոսեան եւ զաւակներ
Աներորդին՝ Տէր եւ Տիկ. Սէմ Ռազուպեան եւ զաւակներ
Քենին՝ Օր. Օսան Ռազուպեան
Եւ համայն Մաթոսեան, Մալճեան եւ Ռազուպեան ընտանիքներ
ու բարեկամներ:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍՏ ԵՒ ՀԱԻԱՔ

ՄԵԹՐ ԳԱՍՊԱՐ ՏԷՐՏԷՐԵԱՆ
(1934-2021)

ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Մանուկեան եւ Դարուհի Յակոբեան Սանուց Միութիւնը ծրագրած է հոգեհանգիստ եւ յիշատակի հաւաք մը՝ ոգեկոչելու համար յիշատակը «Յ-Մ»ի ամենէն փայլուն շրջանաւարտներէն նորոք հանգուցեալ

ՄԵԹՐ ԳԱՍՊԱՐ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ:

Հանգուցեալի մահը տեղի ունեցած էր Օգոստոս 23-ին, իսկ յուղարկաւորութիւնը՝ Օգոստոսի 28-ին, Պէյրութի Ս. Նշան եկեղեցու մէջ:

Մեթր Գասպար Տէրտէրեան մեր վարժարանի բարձր կարգերու աշակերտ եղած տարիներէն աչքի ինկած է իր անսակարկ հայրենասիրութեամբ, այնուհետեւ ան իր մասնագիտական, խմբագրական, հրապարակագրական ու հրապարակախօսական ամբողջ կարելիութիւններով մեծ ներդրում ունեցած է Լիբանանահայ «Գրական Շրջանակ»էն եւ հայ-արաբ բարեկամութեան եւ յառաջդիմական գաղափարախօսութեան բնագաւառներէն ներս:

Վայր՝ Կիրակի, 3 Հոկտեմբեր 2021, Վէն Նայսի Ս. Պետրոս Հայաստանեայց Առաքելական եկեղեցու մէջ, հաւաքը՝ յետ հոգեհանգստեան արարողութեան:

Հանգուցեալին յիշատակն ու վաստակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

Ոչ եւս է Էտփին Մինասեան

Յաւով իմացանք գաղութիս սիրուած անձնաւորութիւններէն եւ Պոլսահայ Միութեան ատենապետ իրաւաբան էտփին Մինասեանի վաղահաս մահը:



Հանգուցեալը մեծ ներդրում ունեցած է եւ գործնապէս աջակցած գաղութիս տարբեր կազմակերպութիւններու ազգօգուտ միջոցառումներուն:

Այս տխուր առիթով մեր խորագգաց ցաւակցութիւնները հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Պոլսահայ Միութեան եւ իր բարեկամական լայն շրջանակին:
Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւն

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

Massis2@earthlink.net
(626) 797-7680

Eulogy - Takouhi Bozoyan (1931-2021)

Takouhi Bozoyan (nee Knabblian), 90, passed away peacefully, on September 12, 2021, surrounded by her loving family at her beach home in Belmar, NJ.



Born in Syria, 1931, of Armenian descent, both her parents passed away when she was only 7 years old. Takouhi lived between orphanages and relatives' homes until the age of 16 when she met and wed the late Yervant (Edward) Bozoyan. They immigrated to the USA in 1953 with their children, settling in Union City where she lived until her passing. She sponsored many of her relatives to come to America from overseas in search of the American dream during difficult times. Takouhi was a stay-at-home mom, a homemaker who self-taught herself the English language and at times cared for her working friend's children. She was a pillar of the community, a devoted parishioner of Holy Cross Armenian Apostolic Church in Union City, where she was an honorary member of its Women's Guild. She read the bible on a daily basis, and was in the process of reading it in its entirety for the fourth time. She was happiest spending quality time with loved ones at the family beach house in Belmar, where there was an open door policy as everyone was always welcome. She was especially passionate about her cooking. She enjoyed doing so for her family and friends, especially during the holidays, and for the annual Holy Cross Armenian Church Bazaar, where she would spend days preparing the traditional Armenian foods and desserts, and would donate them all. Totally committed to helping the church, other parishioners and friends. She worked very hard, selflessly, in spite of her poor health, and gave away what she had generously, to all. She was the model parishioner, who any priest would love to have as a member of his church.

Devoted wife, loving mother to six children, adoring grandmother, great grandmother, also survived by many nephews, nieces, and sister-in-law, Yeretzgin/Diramayr Anahid Kalayjian.

Grandma Takouhi Bozoyan

By Vince Iaquez (9-12-2012)

When I heard the news of your passing early this morning, I couldn't believe it. R.I.P Grandma 3/11/31 - 9/12/21

You are truly a fighter, a person who is so caring and loving, and of course, a person who is so close to God. I'm glad I got to have a close relationship with you. I enjoyed every second that I got to be with you. Even in your final days you still managed to say "I love you so much". That's something I will never forget, especially down in Belmar, where you were most happy, seeing your grandkids and great-grandkids and spending time with them. You were able to touch the hearts of anyone you met, because that's the kind of person you were. If I had to describe you to anyone, it would be like a "dove", because a "dove" is a bird that is a symbol of love, peace and innocence . . . You had all 3 of these qualities. This is not a goodbye.

It's a "see you later," and of course, take good care of my personal guardian angel. I can rest easy knowing you are with him watching over me now.

Lastly to my loving sweet Grandma ~ you will always be my Queen !!!

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

«Նափոլին» Յաղթեց Եւ Առաջատարն Է

Club	MP	W	D	L	GF	GA	GD	Pts
1 Napoli	6	6	0	0	16	2	14	18
2 Milan	6	5	1	0	12	3	9	16
3 Inter Milan	6	4	2	0	20	7	13	14
4 Roma	6	4	0	2	14	8	6	12
5 Fiorentina	6	4	0	2	9	9	0	12

Իտալիոյ ֆուտբոլի առաջնութեան 6-րդ հանգրուանին «Նափոլին» սեփական դաշտին վրայ խաղցաւ «Կալիարիի» հետ եւ արձանագրեց 6-րդ յաղթանակը Ա. Սերիայի ընթացիկ մրցաշրջանի ընթացքին:

Իտալացի Լուչանօ Սպալետիի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

«Նափոլին» 18 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղը ընթացող «Միլանի» նկատմամբ:

«Լացիօն» Յաղթեց «Ռոմային»



Իտալիոյ ֆուտբոլի առաջնութեան 6-րդ հանգրուանի կեդրոնական խաղի ընթացքին իրար դէմ մրցեցան Հռոմի երկու ակումբները՝ «Լացիօն» եւ «Ռոման»:

Հռոմէական «տերպիին» մէջ այս անգամ աւելի ուժեղ էր «Լացիօն», որ երեք գնդակ ուղարկեց «գալլերու» բերդը՝ ընդունելով միայն 2-ը: «Ռոմայի» կազմէն ներս աչքի ինկան Իբանչեսը եւ Վերետուն, իսկ «Լացիօն»՝ Սպալիչը, Պետրոն եւ Անտերսոնը:

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» մեկնարկային կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ խաղին:

Այս հանգրուանէն յետոյ «Ռոման» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին մէջ 4-րդն է 12 կէտով, իսկ «Լացիօն»՝ 6-րդը (11 միաւոր):

«Արսենալ» Պարտութեան Մատնեց «Թոթենհեմին»

Անգլիոյ ֆուտբոլի առաջնութեան 6-րդ հանգրուանին տեղի ունեցաւ լոնտոնեան «տերպիին»՝ «Արսենալի» եւ «Թոթենհեմի» մասնակցութեամբ: Սպանացի Միկել Արտետայի գլխավորած խումբը մրցակիցին պարտութեան մատնեց 3:1 արդիւնքով:

Անգլիական առաջատար միւս խումբերը արձանագրեցին հետեւեալ արդիւնքները.

- «Մանչեսթըր Եունայթըտ» - «Ասթոն Վիլլա» 0:1
- «Չելսի» - «Մանչեսթըր Սիթի» 0:1
- «Պրենթֆորտ» - «Լիվըրփուլ» 3:3
- 6-րդ հանգրուանի աւարտին մրցաշրջանի աղիւսակը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.
- 1-«Լիվըրփուլ» 14 կէտ
- 2-«Մանչեսթըր Սիթի» 13 կէտ
- 3-«Չելսի» 13 կէտ
- 4-«Մանչեսթըր Եունայթըտ» 13 կէտ
- 5-«Էվըրթըն» 13 կէտ

ՊՍԺ-ի Յաղթարշաւը Կը Շարունակուի

Ֆրանսայի առաջնութեան գծով ՊՍԺ-ի յաղթարշաւը կը շարունակուի: 8-րդ հանգրուանին փարիզցիները ընդունեցին «Մոնպելիէին» եւ առաւելութեան հասան 2:0 արդիւնքով:

ՊՍԺ-էն մէկական անգամ աչքի ինկան Սենեկալցի կիսապաշտպան Իտրիս Գեյնս ու գերմանացի Եուլիան Տրաքսլերը:

ՊՍԺ-ն արձանագրեց 8-րդ յաղթարշաւը յաղթանակը եւ 100 տոկոսանոց ցուցանիշով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղը գտնուող «Մարսելը» 2 հանդիպում պակաս անցուցած է եւ ետ է 10 միաւորով:

Հարոյեանը Պատմական Կոլի Հեղինակ

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի պաշտպան վարազդատ Հարոյեանը պատմական կոլի հեղինակ դարձաւ «Կատիսի» կազմին մէջ՝ դառնալով առաջին հայ ֆուտբոլիստը, որ կոլ նշանակեց է Սպանիոյ առաջնութեան ընթացքին:

Լա Լիգայի 7-րդ հանգրուանին «Կատիս» արտագնայ խաղին մրցեցաւ «Ռայօ Վալէյկանօի» դէմ: Տան տէրերը յաղթեցին 3:1 արդիւնքով:

Վարազդատ Հարոյեանը «Կատիսի» հիմնական կազմին մէջ էր: Ան դարձաւ պատմական կոլի հեղինակ: Ան կոլի հեղինակ դարձաւ 23-րդ վայրկեանին՝ դառնալով առաջին հայ ֆուտբոլիստը, որ կոլ կը նշանակէր Սպանիոյ առաջնութեան ընթացքին:

Այս հանգրուանէն յետոյ «Կատիս» Լա Լիգայի մրցաշարային աղիւսակին վրայ 13-րդն դիրքի վրայ է եւ ունի 6 կէտ: Առաջատարը 17 միաւորով «Ռեալն» է:



Ադամեանը Մասնակցեցաւ «Հոֆենհայմի» Յաղթական Խաղին

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի կիսապաշտպան Սարգիս Ադամեանը մասնակցեցաւ «Հոֆենհայմի» յաղթական խաղին:

Գերմանիոյ առաջնութեան՝ Պունտեսլիկայի 6-րդ հանգրուանին «Հոֆենհայմը» սեփական յարկի տակ ընդունած էր «Վոլֆսպուրկին» եւ առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:

Հայաստանի ազգային խումբը ֆուտբոլիստ Սարգիս Ադամեանը «Հոֆենհայմի» հիմնական կազմին մէջ էր, սակայն փոխարինուեցաւ 70-րդ վայրկեանին:

Այս յաղթանակէն յետոյ «Հոֆենհայմ» մրցաշարային աղիւսակի վրայ 9-րդն է 8 միաւորով:

Հայաստանի Գեղասահքի Պարային Ձոյգը Ողիմպիական Խաղերու Ուղեգիր Նուաճած Է

Գերմանիայի Օբերստդորֆ քաղաքին մէջ աւարտած է գեղասահքի Nebelhorn Trophy 2021 վարկանշային մրցաշարը:

Հայաստանը ներկայացնող Թինա Կարապետեան - Սիմոն Սենեկալ պարային զոյգը պարտադիր եւ ազատ ծրագրերու արդիւնքներով գրաւած է 4-րդ տեղը եւ նուաճած ֆեքինի ողիմպիական խաղերու ուղեգիր:

Այդ պիսով, 16 տարուայ ընդմիջումէն յետոյ Հայաստանը մասնակից կ'ունենայ ողիմպիական խաղերու գեղասահքում:



Գառնիկ Չոլակեանը՝ Ծանրամարտի Եւրոպայի Մ-20 Ախոյեան



19-ամեայ Գառնիկ Չոլակեանը հռչակուած է ծանրամարտի մինչեւ 20 տարեկաններու Եւրոպայի ախոյեան:

Ֆինլանտիայի Ռովանիեմի քաղաքին մէջ Սեպտեմբերի 24-ին մեկնարկած է ծանրամարտի մինչեւ 20 եւ մինչեւ 23 տարեկաններու Եւրոպայի առաջնութիւնը:

Հայաստանի առաջին ներկայացուցիչ, 19-ամեայ Գառնիկ Չոլակեանը մինչեւ 20 տարեկաններու 55 կգ քաշայիններու պայքարին երկամարտի 230 (100+130) արդիւնքով նուաճեց ոսկէ մետալ՝ ետ թողնելով երկու թուրք մրցակիցներու:

ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ՝ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Շնորհակալութիւն այս համաճարակին
ամբողջ տեսողութեան դաստիարակներուն
հետ գործակցելնուդ համար

Շնորհակալութիւն՝ ձեր նուիրումին եւ
ուսումը նախապատուութիւն
դարձնելուն մէջ մեզի հետ
աշխատելնուդ համար

Երբ դպրոցական նոր տարեշրջանը կը սկսի,
դաստիարակները յանձնառու են Քալիֆորնիոյ
բոլոր աշակերտները եւ դպրոցները ապահով պահելու

ՄԻԱՍԻՆ՝

ՄԵՆՔ ԿՐՆԱՆՔ ԲՈԼՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ
ԲՈԼՈՐ ԹԱՂԱՄԱՍԵՐՈՒՆ ՄԷՋ
ՈՒՍՄԱՆ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ՎԱՅՐ
ՄԸ ԴԱՐՁՆԵԼ



Մենք գիտենք, որ որակաւոր
հանրային դպրոցները բոլորիս համար
Քալիֆորնիան աւելի լաւ կը դարձնեն

Ի. ԹՈՊԻ ՊՈՅՏ
«Սի.Թի.Էյ.»ի նախագահ

